

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Հ Ա Ս Տ Ա Տ ՈՒ Մ Ե Մ**

ՀՀ կրթության և գիտության

նախարար՝

Ա. Աշոտյան

«-----» ----- 2009թ.

ՀՀ պետ. գրանցման թ. -----

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ**

*Մասնագիտությունը՝ 310901 Հողաշինարարություն և հողային կադաստր*

*Որակավորման աստիճանը՝ Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր*

*Ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից*

**ԵՐԵՎԱՆ 2009թ.**

1. 310901 Հողաշինարարություն և հողային կադաստր  
դասիչ, անվանում

**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

1.1. 310901 Հողաշինարարություն և հողային կադաստր մասնագիտությունը  
դասիչ, անվանում  
հաստատված է Հայաստանի հանրապետության Կառավարության 2007 թ. օգոստոսի 30-ի թիվ 1038-Ն որոշմամբ:

1.2. Շրջանավարտի որակավորումը՝ Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր  
որակավորման աստիճան  
310901 Հողաշինարարություն և հողային կադաստր մասնագիտությամբ  
դասիչ, անվանում  
Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական  
որակավորման աստիճան  
կրթական ծրագրի յուրացման նորմատիվային ժամկետը 4 տարի 8 ամիս է:

1.3. Շրջանավարտի որակավորման բնութագիրը.  
Հողաշինարարություն և հողային կադաստր մասնագիտությամբ  
դասիչ, անվանում

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր  
որակավորման աստիճան  
բուհն ավարտելուց անմիջապես հետո կարող է զբաղեցնել հետևյալ պաշտոնները՝

1. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե  
քարտեզագրման, գեոդեզիայի, հողաշինարարության և վերահսկողության վարչություններ, տեղեկատվական կենտրոն, գրանցման և հաշվառման վարչություններ:
2. Գեոդեզիայի և քարտեզագրման ինստիտուտ
3. Հողաշինարարության և մոնիթորինգի ինստիտուտ
4. Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներ
5. Մարզպետարաններ, քաղաքապետարաններ և համայնքապետարաններ  
գեոդեզիստ, քարտեզագրող
6. Գյուղատնտեսության նախարարություն
7. Բնապահպանության նախարարություն
8. Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ

1.3.1 Մասնագիտական գործունեության բնագավառը.  
310901 Հողաշինարարություն և հողային կադաստր  
դասիչ, անվանում

մասնագիտությունը առնչվում է գիտության (տեխնիկայի, տեխնոլոգիաների, կառավարման և այլն) այն բնագավառին, որը ներառում է մարդկային գործունեության եղանակների, միջոցների և մեթոդների այն ամբողջությանը, որն ուղղված է՝

Շրջանավարտը պատրաստվում է հետևյալ գործունեությունների իրականացման համար.

- նախագծային
- տեխնոլոգիական
- կազմակերպչա-կառավարման
- գիտա-հետազոտական

1. Նախագծային գործունեություն

1.1 Մասնակցում է հողաշինարարական, ինչպես նաև կադաստրային ճարտարագիտական համակարգերի ժամանակակից կատարելագործված տեխնոլոգիա-

ներով նախագծման, տարածքների, բնապահպանական բարեկարգման, կատարելագործման, լանդշաֆտների ստեղծման, հողային պաշարների համալիր օգտագործման և պահպանման աշխատանքներին:

1.2 Մասնակցում է բնապահպանական տեխնոլոգիական նախագծման աշխատանքներին, պահպանելով շրջակա միջավայրի պահպանման պահանջները, կանխարգելով մարդկային գործունեության վնասակար ազդեցությունը:

1.3 Կատարում է էկոլոգիական, տնտեսական և մասնագիտական փորձաքննություն

2. Արտադրական, տեխնոլոգիական գործունեություն

2.1 Կատարում է հողերի մելիորացիայի, ռեկուլտիվացիայի, հողային պաշարների օգտագործման և պահպանման բարձր տեխնոլոգիաներով կազմված նախագծերի իրականացման աշխատանքներ:

2.2 Մասնակցում է բնապահպանական և հողային պաշարների օգտագործման և պահպանման նախագծային աշխատանքներին: Հետախուզման օբյեկտների վիճակի գնահատման և նախագծային պարամետրերի ճշգրտման աշխատանքներին:

2.3 Կատարում է բնական պայմանների, մարդու գործունեության սոցիալ-տնտեսական միջոցների և միջավայրի պայմանների փոփոխման գնահատման համար:

2.4 Կատարում է տեղեկատվական աշխատանքներ տարածքային և պաշարային կադաստրների կազմման համար:

3. Կազմակերպչական կառավարական գործունեություն

3.1 Կատարում է աշխատանքներ՝ տեխնիկական, կազմակերպչական, ղեկավարական բնապահպանական և հողաշինարարական օբյեկտների կառուցվածքների շինարարության, նորոգման, վերափոխման ուղղությամբ, նրանց բոլոր նորմերի և կանոններին համապատասխան, սպահովելով աշխատանքի բարձր արդյունավետությունը:

3.2 Կատարում է աշխատանքներ ինֆորմացիոն ծառայությունների ուղղությամբ, կազմակերպման աշխատանքներ, աշխատանքի և ղեկավարման մեթոդոլոգիայի ապահովման, տեխնիկական վերահսկման և այլ բնագավառներում:

3.3 Մշակում է մեթոդական և նորմատիվ փաստաթղթեր, տեխնիկական դոկումենտացիաներ և միջոցառումներ մշակած նախագծերի իրականացման համար, ապահովելով բոլոր կառուցվածքների անընդհատ և անվթար աշխատանքները:

3.4 Մասնակցում է տեխնիկական միջոցների համակարգերի և գործընթացների, սարքավորումների ստանդարտացման և անհրաժեշտ անկարկների, կարծիքների, եզրակացությունների կատարման աշխատանքներին:

3.5 Մասնակցում է օբյեկտների և նախագծերի էկոլոգիական-տնտեսական, տեխնիկա-տնտեսական վերլուծություններին:

3.6 Մասնակցում է հողային և ջրային օրենսդրությունների պահպանման աշխատանքներին, մելիորատիվ, շինարարական ձեռնարկությունների և կազմակերպությունների, հողօգտագործողների և ջրօգտագործողների գործունեություններին:

3.7 Խորհրդատվական օգնություն է ցուցաբերում նախագծերի, ծրագրերի, պլանների և պայմանագրերի իրականացման գործում:

4. Գիտահետազոտական գործունեություն

4.1 Մասնակցում է հետազոտական աշխատանքներին, որոնք վերաբերվում են բնօգտագործման, բնապահպանման, հողային պաշարների օգտագործման, հողերի մելիորացիայի, հողերի վերականգնման և այլ բնագավառներին:

4.2 Հետազոտում և վերլուծում է նախագծի իրականացման հետևանքով շրջակա միջավայրում սպասվելիք փոփոխությունները, հաշվի առնելով հողերի և ջրերի հիդրոերկրաբանական, հիդրոլոգիական և մելիորատիվ ռեժիմները:

4.3 Կազմակերպում է աշխատանքներ տեխնիկական անձնակազմի գիտելիքների բարձրացման ուղղությամբ, սպահովելով ինքնուրույն ստեղծագործական

գարգացման պահանջները, գիտության առաջատար փորձերի ներդրումը՝ ձեռնարկության արդյունավետ աշխատանքի ակնկալիքով:

1.3.2. Մասնագիտական գործունեության օբյեկտները

- Բնական օբյեկտները՝ գեոհամակարգերի տարբեր մակարդակների բաղադրիչները, հողը, գրունտը, մակերևութային և ստորգետնյա ջրերը, կենդանական և բուսական աշխարհը:
- Բնական-տեխնոգեն համակարգերը՝ կառուցվածքները և միջոցները, բնական բաղադրիչների օգտագործման բարձրացումը, հողաշինարարական, ճարտարագիտական, բնապահպանական, ջրատնտեսական համակարգերը:

1.3.3. Մասնագիտական գործունեության տեսակները

310901 Հողաշինարարություն և հողային կադաստր մասնագիտությամբ

դասիչ, անվանում

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրը սույն պետական կրթական

որակավորման աստիճան

չափորոշիչով սահմանված հիմնարար և մասնագիտական պատրաստությանը համապատասխան կարող է կատարել մասնագիտական գործունեության հետևյալ տեսակները՝

1. Նախագծային
2. Արտադրական տեխնոլոգիական
3. Կազմակերպչական ղեկավարական
4. Գիտահետազոտական

Հողաշինարարական նախագծման համար անհրաժեշտ գեոդեզիական, հիդրոլոգիական, երկրաբանական, հողագիտական և այլ նյութերի ստեղծման մշակման մասնագիտական գործունեություն:

- Հողերի բարելավման, ջրային ռեսուրսների օգտագործման հիդրոմելիորատիվ համակարգերի նախագծման գործունեություն:
- Կատարել կադաստրային քարտեզագրում, մասնակցել հողօգտագործողների և հողատարածքների հաշվառման և գրանցման աշխատանքներին:
- Պատշաճ կերպով կազմակերպել հողային պաշարների արդյունավետ օգտագործումը, կատարել հողային ռեսուրսների նպատակային օգտագործմանն ուղղված աշխատանքներ:
- Պետք է մասնակցեն ամբիոնի կողմից տարվող գիտահետազոտական և լաբորատոր աշխատանքներին:

1.3.4. Մասնագիտական գործունեության ընդհանրական խնդիրները.

310901 Հողաշինարարություն և հողային կադաստր մասնագիտությամբ

դասիչ, անվանում

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրը կախված մասնագիտական

որակավորման աստիճանը

գործունեության տեսակից պետք է պատրաստ լինի լուծելու հետևյալ մասնագիտական խնդիրները.

**ա. մասնագիտական գործունեության՝**

Կարողանա լուծի հողաշինարարության և հողային կադաստրի, ժամանակակից կատարելագործված տեխնոլոգիաներով նախագծման տարածքների, բնապահպանական բարեկարգման, կատարելագործման, լանդշաֆտների ստեղծման, հողային պաշարների համալիր օգտագործման և պահպանման հարցերը: Մասնակցում է բարձր արդյունավետությամբ բնապահպանական տեխնոլոգիական նախագծման աշխատանքներին, պահպանելով շրջակա միջավայրի պահպանման պահանջները, կանխարգելիվ մարդկային գործունեության վնասակար ազդեցությունը:

**բ. փորձարարական-հետազոտական գործունեության՝**

Մասնակցում է հետազոտական աշխատանքներին, ուղղված բնօգտագործման, բնապահպանման, հողային պաշարների օգտագործման, հողերի մելիորացիայի, հողերի վերականգնման և այլ ուղղություններին: Հետազոտում և վերլուծում է նախագծի իրա-

կանացման հետևանքով շրջակա միջավայրում սպասվելիք փոփոխությունները, հաշվի առնելով հողերի և ջրերի հիդրոերկրաբանական, հիդրոլոգիական և մելիորատիվ ռեժիմները: Կազմակերպում է աշխատանքներ տեխնիկական անձնակազմի գիտելիքների բարձրացման ուղղությամբ, ապահովելով ինքնուրույն ստեղծագործական զարգացման պահանջները, գիտության առաջատար փորձերի ներդրումը՝ ձեռնարկության արդյունավետ աշխատանքի ակնկալիքով:

#### **գ. կազմակերպչական-կառավարական գործունեության**

Կատարում է տեխնիկական, կազմակերպչական, ղեկավարական բնապահպանական աշխատանքներ, ապահովելով աշխատանքի բարձր արդյունավետությունը: Կատարում է աշխատանքներ ինֆորմացիոն ծառայությունների ուղղությամբ, կազմակերպման աշխատանքներ, աշխատանքի և ղեկավարման մեթոդների ապահովման, տեխնիկական վերահսկման և այլ բնագավառներում: Մշակում է մեթոդական և նորմատիվ փաստաթղթեր, տեխնիկական դոկումենտացիաներ և միջոցառումներ մշակած նախագծերի իրականացման համար, ապահովելով բոլոր կառուցվածքների անընդհատ և անվթար աշխատանքները: Մասնակցում է տեխնիկական միջոցների համակարգերի և գործընթացների, սարքավորումների ստանդարտացման և անհրաժեշտ կարծիքների, եզրակացությունների ձևավորման աշխատանքներին: Մասնակցում է օբյեկտների և նախագծերի հողաշինարարական, էկոլոգիական-տնտեսական, տեխնիկա-տնտեսական վերլուծություններին: Մասնակցում է հողային օբեկտությունների պահանման աշխատանքներին: Խորհրդատվական օգնություն է ցուցաբերում նախագծերի, ծրագրերի և պայմանագրերի իրականացման գործում:

#### **1.3.5. Որակավորման պահանջները.**

Մասնագիտական խնդիրները լուծելու նպատակով Տեխնիկայի և տեխնոլոգիայի  
որակավորման աստիճան

բակալավոր կատարում է հետևյալ գործառնությունները՝

1. Նախագծային
  2. Արտադրական տեխնոլոգիական
  3. Կազմակերպչական ղեկավարական
  4. Գիտահետազոտական
- Մասնակցում է հողօգտագործողների մասնագիտական խնդիրների առաջադրման, ծրագրերի կազմման և լուծմանն ուղղված աշխատանքների բոլոր փուլերին:
  - Կազմակերպում է նյութերի, միջոցների, սարքավորման, տեխնոլոգիական գործընթացների արդյունավետ օգտագործման գործառնություններ:
  - Մասնակցում է հողօգտագործման գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման, իրականացման և արդյունքների մշակման բոլոր փուլերին:
  - Ուսումնասիրում է հողօգտագործողներին առնչվող մասնագիտական գրականությունը և գիտատեխնիկական ինֆորմացիան, ծանոթ է բնագավառի գիտատեխնիկական նորություններին և նվաճումներին:
  - Օգտվում է հողօգտագործման ինֆորմացիոն տեխնոլոգիաներից, տվյալների բազայից, փորձագիտական համակարգերից և կիրառական ծրագրերի փաթեթներից:
  - Կազմակերպում է իր ենթակայության ստորբաժանման աշխատանքը:

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավոր պետք է ծանոթ լինի՝

որակավորման աստիճան

- իր մասնագիտական գործունեության բնագավառին առնչվող իրավական ակտերին, որոշումներին, կարգադրություններին, մեթոդական և նորմատիվային նյութերին,
- գործող չափորոշիչներին, բնագավառի սարքավորման, ինֆորմատիկայի միջոցների տեխնիկատնտեսական ցուցանիշներին, տեխնոլոգիաներին, դրանց շահագործման կարգացույցներին,
- գիտահետազոտական աշխատանքների իրականացման արդյունքով ստացված տվյալների հաշվետվությունների և տեխնիկական փաստաթղթերի կազմման եղանակներին,

- աշխատանքային օրենսդրության հիմունքներին, աշխատանքի պաշտպանության նորմերին և կանոններին:

**1.3.6. Մասնագիտական հարմարման հնարավորությունը**

**Տեխնիկայի և տեխնոլոգիայի** բակալավրը կարող է հարմարվել հարակից

որակավորման աստիճան

մասնագիտական գործունեության հետևյալ տեսակներին՝

1. Հողաբարելավման (մելիորացիայի) նախագծերի կազմման, հետախուզական, նախագծային և շինարարական աշխատանքներին:
2. Հիդրոտեխնիկական նախագծման և շինարարական աշխատանքներին
3. Քաղաքացիական և արդյունաբերական նախագծային և շինարարական աշխատանքներին:

**1.4. Շրջանավարտի կրթությունը շարունակելու հնարավորությունը**

**310901 Հողաշինարարություն և հողային կադաստր** մասնագիտությամբ

դասիչ, անվանում

բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագիրը յուրացրած

**Տեխնիկայի և տեխնոլոգիայի** բակալավրը պատրաստ է կրթությունը

որակավորման աստիճան

շարունակելու

- կրճատված ժամկետներում ստանալու բակալավրի որակավորման աստիճան 2-րդ մասնագիտության գծով,
- մագիստրատուրայում ստանալու **Ճարտարագետ-մագիստրոսի** որակավորման որակավորման աստիճան աստիճան,
- ասպիրանտուրայում (միայն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի հիմնական կրթական ծրագիրը յուրացնելուց հետո)՝ ստանալու գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

**2. ԴԻՄՈՐԴԻ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

2.1. Դիմորդի նախորդող կրթական մակարդակը՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն կամ միջին մասնագիտական կրթություն:

2.2. Դիմորդը պետք է ունենա՝

պետական նմուշի վկայական միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության, կամ միջին մասնագիտական կրթության, կամ նախնական մասնագիտական կրթության մասին, որում կա գրառում դիմորդի միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ստանալու մասին, կամ բարձրագույն մասնագիտական կրթության մասին:

**3. 310901 Հողաշինարարություն և հողային կադաստր ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ**

դասիչ, անվանում

**Տեխնիկայի և տեխնոլոգիայի ԲԱԿԱԼԱՎՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ**

որակավորման աստիճան

**ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

3.1 **Տեխնիկայի և տեխնոլոգիայի** բակալավրի պատրաստման հիմնական

որակավորման աստիճան

կրթական ծրագիրը մշակվում է սույն պետական կրթական չափորոշիչներով և ներառում է՝ մասնագիտության ուսումնական պլանը, ուսումնական դասընթացների և պրակտիկաների ծրագրերը:

3.2 **Տեխնիկայի և տեխնոլոգիայի** բակալավրի պատրաստման հիմնական

որակավորման աստիճան

կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնի իրականացման պայմաններին և ուսումնառության ժամկետներին ներկայացվող պահանջները կանոնա-

կարգվում են սույն պետական կրթական չափորոշիչով:

3.3 Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական  
որակավորման աստիճան

կրթական ծրագիրը ձևավորում է հանրապետական, բուհական, ուսանողի կողմից ընտրովի և ֆակուլտատիվ բաղադրիչների դասընթացներից:

Ուսանողի կողմից ընտրովի դասընթացները յուրաքանչյուր կրթաբլոկում բովանդակորեն պետք է լրացնեն հանրապետական բաղադրիչում նշված դասընթացները:

3.4 Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական  
որակավորման աստիճան

կրթական ծրագիրը պետք է նախատեսի հետևյալ կրթաբլոկներում ընդգրկված դասընթացների ուսումնասիրումը՝

ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսական՝ ՀՍՏ

ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական՝ ԸԲ

ընդհանուր մասնագիտական՝ ԸՄԴ

մասնագիտացման՝ ՄԴ

ֆակուլտատիվ՝ Ֆ

ինչպես նաև եզրափակիչ պետական որակավորումը:

3.5 Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական  
որակավորման աստիճան

կրթական ծրագիր բուհական բաղադրիչի բովանդակությունը պետք է ապահովի շրջանավարտի պատրաստությունը սույն պետական կրթական չափորոշիչով սահմանված որակավորման բնութագրի համաձայն:

Բուհական բաղադրիչում ընդգրկված դասընթացները երաշխավորական բնույթ են կրում:

**4. 310901 Հողաշինարարություն և հողային կադաստր ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ**  
դասիչ, անվանում

**Տեխնիկայի և տեխնոլոգիայի ԲԱԿԱԼԱՎՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ**  
որակավորման աստիճան

**ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԳԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

Դասընթացի անվանումը և նրանց հիմնական բաժինը

**Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսական դասընթացների կրթաբլոկ**

Հանրապետական բաղադրիչ

**1. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱ- 136 ժամ**

Ֆիզիկական կուլտուրան ուսանողների ընդհանուր կուլտուրական և մասնագիտական պատրաստվածության գործընթացում: Նրա սոցիալ կենսաբանական հմքերը: Ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես հասարակական երևույթներ: Հայաստանի հանրապետության օրենսդրությունը ֆիզիկական կուլտուրայի մասին: Անհատի ֆիզիկական կուլտուրան: Ուսանողի առողջ կենսակերպի հիմքերը: Աշխատունակության օպտիմալացման նպատակով ֆիզիկական կուլտուրայի միջոցների օգտագործման առանձնահատկությունները: Ընդհանուր ֆիզիկական և հատուկ պատրաստությունը ֆիզիկական դաստիարակության համակարգում:

ՄՊՈՐՏ. Սպորտի կամ ֆիզիկական վարժությունների համակարգի անհատական ընտրություն: Ուսանողների մասնագիտական-կիրառական ֆիզիկական պատրաստություն: Ինքնուրույն պարապմունքների մեթոդիկայի հիմունքները և սեփական օրգանիզմների վիճակի ինքնավերահսկումը:

**2. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ – 120 ժամ, 4 կրեդիտ**

Պատմական գիտության էությունը, մեթոդները: Հայրենական պատմությունը անցյալում և ներկայում: Հայոց պատմությունը որպես համաշխարհային պատմության անքակտելի մաս: Առարկայի պարբերացումը, ուսումնասիրության մեթոդները: Հայ և օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին: Հայ ժողովրդի ծագումը և կազմավորումը: Հին հայկական պետության կազմավորման ու զարգացման փուլերը: Արարատյան թագավորության կազմավորումը և անկումը (9-6-րդ դդ. մ.թ.ա.): Երվանդունիների (հայկազյան) համահայկական պետությունը: Արեւմտյան Պարսկաստանը և Երվանդունիները: Ալեքսանդր Մակեդոնացին և հելլենիզմը Հայաստանում: Արտաշեսյան արքայատոհմի հաստատումը և Արտաշես 1-ին քաղաքական գործիչը: Տիգրան Մեծ: Արտաշեսյան արքայատոհմի անկումը և Արշակունիների Արքայատոհմի հաստատումը: Հին հայկական մշակույթը: Արշակունիների անկումը, Հայաստանի բաժանումները: Քրիստոնեության ընդունումն ու հայոց գրերի գյուտը, որպես ազգի գոյապահպանության կոմպոնենտներ: Հայ ժողովրդի պայքարը հանուն անկախության վերականգնման 5-9-րդ դարերում: Հայ ժողովրդի ազատագրական պայքարն ընդդեմ պարսկաբյուզանդական բռնատիրության և ձուլման քաղաքականության 5-6-րդ դարերում: Արաբական արշավանքները Հայաստան և ժողովրդական ապստամբությունները 8-9-րդ դարերում: Հայկական մշակույթը 5-8-րդ դարե-



րում: Բագրատունիների թագավորության հիմնումը, ամրապնդումը, վերելքը և անկումը: Մելջուկ-թուրքերի արշավանքները և Ջաքարյանների իշխանությունը: Կիլիկիայի Հայկական պետությունը (11-14-րդ դդ.): Ռուբինյան իշխանությունը և թագավորության հռչակումը Կիլիկիայում: Հայ-մոնղոլական դաշինքը, Եգիպտական արշավանքները և թագավորության անկումը: Հայ ազատագրական շարժումները 16-18-րդ դդ.: Հայաստանի 1-ին և 2-րդ - բաժանումները Պարսկաստանի և Թուրքիայի միջև: Ազատագրական շարժումների սկիզբը և հետագա ծավալումը 17-18-րդ դդ.: Իսրայել Օրի: Ազատագրական պատերազմներն Արցախում և Սյունիքում 1720-ական թթ. և դրանց վախճանը: Հովսեփ Էմինը և հայ ազատագրական շարժումը: Հայաստանի ազատագրության ծրագրերը: Հայկական մշակույթը 15-18-րդ - դարերում: Հայաստանը 19-րդ դարի 1-ին կեսին: 1804-1813 թթ. և 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմները և Արևելյան Հայաստանի նվաճումը Ռուսաստանի կողմից: 1806-1812 թթ. և 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմները և Հայաստանը: Պարսկահայերի և արևմտահայերի ներգաղթը: Հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական ու քաղաքական դրությունը 19-րդ - դարի 2-րդ կեսին: Հայ հասարակական-քաղաքական միտքը 1850-1860-ական թթ.: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և հայկական հարցի միջազգայնացումը: Հայ քաղաքական կուսակցությունների ձևավորումը, նրանց ծրագրերն ու գործելակերպը: Արևմտահայերի զանգվածային կոտորածները 1895-1896 թթ.: Հայկական մշակույթը 19-րդ դարում: Հայ ժողովուրդը աշխարհամարտի տարիներին: Հայկական հարցը 1912-1914 թթ.: Առաջին աշխարհամարտի սկիզբն ու ընթացքը: Հայոց ցեղասպանության թուրքական ծրագիրն ու իրագործման փուլերը: Մեծ եղեռնը: Հայ ժողովրդի ինքնապաշտպան մարտերը: 1917 թ. փետրվարյան, հոկտեմբերյան հեղափոխությունները և Հայաստանը: Հայաստանի առաջին հանրապետությունը (1918-1920 թթ.): Հայ ժողովրդի 1918 թ. մայիսյան հերոսամարտերը և Հայաստանի առաջին հանրապետության հռչակումը: Հանրապետության սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը: Արտաքին քաղաքականությունը: Սերի պայմանագիրը: Թուրք-հայկական պատերազմը: Հանրապետության անկումը: Հայաստանի խորհրդային հանրապետությունը 1920-1940 թթ.: Խորհրդային իշխանության հաստատումը, առաջին քայլերը և տնտեսական ու քաղաքական կարևոր իրադարձությունները: Բռնաճնշումները և դրանց հետևանքները: Հայ ժողովուրդը երկրորդ աշխարհամարտի տարիներին: Պատերազմի սկիզբը: Հայրենական Մեծ պատերազմը: Հանրապետության տնտեսության վերակառուցումը պատերազմի պահանջներին համապատասխան: Հայ ժողովրդի մասնակցությունը պատերազմին: Թիկունքի հերոսական աշխատանքը: Սփյուռքահայերի մասնակցությունը երկրորդ համաշխարհային պատերազմին: Հայրենական Մեծ պատերազմի ավարտը: Հայկական հարցը Պոտսդամի կոնֆերանսում: Հայաստանի խորհրդային հանրապետությունը 1945-1991 թթ.: Երկրի տնտեսության վերականգնումը: Հայաստանը ԽՍՀՄ չլույսի քարենորոգումների, Բրեժնևյան հասարակական-քաղաքական կյանքի լճացման տարիներին: Գորբոչովյան վերակառուցման քաղաքականությունը, Արցախյան շարժումը և Մայիսյան ավերիչ երկրաշարժը: Հայաստանի Հանրապետությունը 1991-2003 թթ.: ԽՍՀՄ փլուզումը: Հայաստանի երրորդ հանրապետության հռչակումը: Հողի սեփականաշնորհումն ու ձեռնարկությունների ապապետականացումը: Անցումը շուկայական հարաբերությունների: Թույլ տրված սխալներն ու հետևանքները: Հանրապետության արտաքին քաղաքականությունը: Ցեղասպանության ճանաչման գործընթացը: Արցախյան հիմնահարցը: Հայրենիք-սփյուռք կապերը: Հայկական մշակույթը:

### **3. ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ – 120 ժամ, 4 կրեդիտ**

Լեզվի հիմնական գործառնությունները. լեզուն որպես մարդկային մտածողության արտահայտման ու մտքերի ձևավորման միջոց, որպես հաղորդակցության միջոց, որպես մշակութային արժեքների ստեղծման, պահպանման ու կուտակման միջոց, որպես հասարակական-քաղաքական միտումների կրող: Աշխարհի լեզուները և լեզվաընտանիքները, հայոց լեզվի տեղը հնդեվրոպական լեզվաընտանիքում: Հայոց լեզվի զարգացման պատմական շրջանները (գրաբար, միջին հայերեն, ժամանակակից հայոց լեզու՝ արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ): Հայոց գիրը և գրչությունը: Մեսրոպյան այբուբենի ստեղծման համազգային պատմական նշանակությունը: Ուղղագրության, կետադրության և ուղղախոսության ժամանակակից համակարգերը որպես գրավոր և բանավոր խոսքի կարևորագույն չափանիշներ: Խոսքի կուլտուրայի հիմքերն ու բաղկացուցիչները. ոճաբանություն և ճարտասանական արվեստի հիմունքները: Ժամանակակից հայերենում ոճի հիմնական տեսակների բնութագրումը. գործառական, իրադրական և անհատական ոճեր: Գործառական ոճեր: Առօրյա խոսակցական ոճի ընդհանուր բնութագիրը: Գրական լեզվի ներկա վիճակի և նրա հետագա զարգացման ընթացքի առումով առօրյա խոսակցական ոճի ազդեցության դրական և բացասական միտումները: Ժամանակակից հայոց գրական լեզվի անադարտության պահպանման հիմնական խնդիրները: Գիտական ոճի ընդհանուր բնութագիրը: Գիտական և կրթական-ուսումնական ոլորտների գործունեության լեզվական-խոսքային չափանիշները: Վարչագործարարական ոճի ընդհանուր բնութագիրը: Վարչատնտեսական, օրենսդիր, օրինաստեղծ և պետական կառավարման, ինչպես նաև քաղաքական, միջազգային, դիվանագիտական ոլորտներում կիրառվող լեզվական-խոսքային չափանիշների առանձնահատկությունները: Այդ ոլորտներին վերաբերող փաստաթղթերի կազմման և դրանց համակարգման հիմնական սկզբունքները: Գովազդային տեքստերի ձևավորման և դրանց մատուցման հիմնական եղանակները: Հրատարակախոսական ոճի ընդհանուր բնութագիրը: Հուզական-հոգեբանական ներգործության և փաստարկվածության ու տրամաբանականության մոտեցումների համադրումը որպես այդ ոճի գործառնության հիմնական սկզբունք: Գեղարվեստական ոճի ընդհանուր բնութագիրը: Այդ ոճի հիմնական չափանիշների (գրական լեզվի մաքրությունն ու կատարելությունը, գեղագիտականությունը ևն.) պարզաբանումը հայ և համաշխարհային գրական մեծագույն արժեքների օրինակով: Ճարտասանական արվեստի պատմության և հիմնական սկզբունքների համառոտ ակնարկ: Ճարտասանական արվեստի կազմախոսական-բնախոսական հիմքերը. ձայնի դրվածքը, շնչառության տեխնիկան, հնչյունի ձևավորման և արտաբերման տեխնիկան ու կուլտուրան: Խոսքի կազմակերպման հոգեբանական, հուզական և տրամաբանական մեխանիզմները:

### **4. ՌՈՒՄԱՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹ – 120 ժամ, 4 կրեդիտ**

Գյուղատնտեսության համար մասնագետներ պատրաստելու խնդիրները որոշարկում են «Ռուսաց լեզու» դասընթացի հաղորդակցական և պրակտիկ բնույթը. անհատական խոսքի և երկխոսության, ընթերցելու և գրելու, ընկալման և խոսակցական ունակությունների ձևավորումը և զարգացումը: Գործառական-իմաստաբանական հիմքի վրա խմբավորված քերականական գիտելիքների ուսուցումը դիդակտիկ սկզբունքների և ուսումնական նյութի բաշխվածության հաշվառմամբ: Նվազագույնի հասցված բառային-քերականական նյութի մատուցումը որպես խոսքի կուլտուրայի կատարելագործման, խոսակցական սխալների կանխատեսման և դրանց վերացման լեզվական հիմք: Ուսուցանվող լեզվի երկրի մշակույթը և ավանդույթները: Խոսքի բարեկանոնության (կանոնավարության) տարբեր միջոցների կիրառումը ո-

րոշակի իրավիճակներում: Խոսելու ունակությունը. անհատական խոսքի և երկխոսության կազմակերպումը օգտագործվող պարզ բառային-քերականական միջոցների կիրառմամբ: Հրապարակային խոսքի հիմունքները (բանավոր հաղորդում, զեկույց ևն.): Խոսքի ընկալումը. անհատական խոսքի և երկխոսության ըմբռնումը կենցաղային և մասնագիտական հաղորդակցման ոլորտներում: Ընթերցանություն. տեքստերի տեսակները, ոչ բարդ տեքստեր և մասնագիտական ուղղվածության տեքստեր: Գրավոր խոսքի ունակություն. համառոտագրում, ռեֆերատ, հաղորդում, դրույթներ: Վարչագործարարական ոճ (դիմում, ստացական, արձանագրություն, տեղեկանք և այլն):

## **5. ՕՏԱՐ ԼԵԶՈՒ – 240 ժամ, 8 կրեդիտ**

### **Անգլերեն լեզու**

Հնչյունների արտասանության, ինտոնացիայի, շեշտադրական համակարգի և ուսուցանվող լեզվում խոսքի ռիթմի յուրահատկությունը, տառադարձության ընթերցանությունը: Ընդհանուր և տերմինա-բանական բնույթի 2000 ուսուցողական բառային միավորով բառապաշարի նվազագույն: Ըստ կիրառման բնագավառի (կենցաղային, տերմինաբանական, ընդհանուր գիտական, պաշտոնական և այլն) հասկացություն բառապաշարների տարբերակման մասին: Հասկացություն բառակազմական հիմնական միջոցների մասին: Հասկացություն ազատ և կայուն բառակապակցությունների, դարձվածաբանական միավորների մասին: Գրավոր և բանավոր հաղորդակցության ժամանակ առանց իմաստի աղճատման ընդհանուր բնույթի հաղորդակցումն ապահովող քերականական երևույթներ: Ուսումնասիրվող լեզվի երկրների մշակույթն ու սովորույթները: Բանավոր խոսքը: Պաշտոնական և ոչ պաշտոնական շփման ընդհանուր հաղորդակցական իրադրություններում առավել չափով օգտագործվող և հարաբերականորեն պարզ բառային-քերականական միջոցների օգտագործումը երկխոսության մեջ և անհատական խոսքում: Հրապարակային խոսքի հիմունքները (բանավոր հաղորդում, զեկույց): Ունկնդրում: Կենցաղային և մասնագիտական հաղորդակցման բնագավառներում երկխոսության և անհատական խոսքի ըմբռնումը: Ընթերցանություն: Տեքստերի տեսակները. ոչ բարդ գործնական բնույթի և լայն մասնագիտական ուղղվածության տեքստեր: Գրավոր խոսքը: Խոսքային ստեղծագործությունների տեսակները. կենսագրություն, փոքր զեկույցներ, անձնական նամակ, գործնական նամակ, ռեֆերատ:

### **Գերմաներեն լեզու**

Ծրագիրը ենթադրում է գերմաներեն լեզվի իմացության գործնական կիրառում, լեզվին բնորոշ ճիշտ շեշտադրություն և արտասանություն: Քերականական անհրաժեշտ գիտելիքների ձեռք բերումը, նրանց կիրառումը բանավոր խոսքում և թարգմանչական աշխատանքում: Ուսուցողական ընդհանուր բառապաշարի և տերմինաբանական բնույթի 2000 բառային նվազագույն միավոր: Բառապաշարի տարբերակում ըստ կիրառման բնագավառի (կենցաղային, տերմինաբանական, գիտական, պաշտոնական): Ընդհանուր հասկացություն բառակազմությանը վերաբերող միջոցների մասին: Ընդհանուր հասկացություն ազատ և կայուն բառակապակցությունների ու դարձվածաբանության վերաբերյալ: Քերականական հմտությունների իմացությունը գրավոր և բանավոր հաղորդակցության ժամանակ առանց աղճատման ընդհանուր բնույթի հաղորդակցումն ապահովելու համար: Ուսուցանվող լեզվի երկրների մշակույթի և սովորույթների յուրացում: Ընկալումը բանավոր խոսքի ընթացքում: Առաջադրված հարցերին համապատասխանորեն արձագանքելու կարողություն: Անհատական խոսքով և երկխոսությամբ ներկայացվող տեքստեր: Հրապարակային խոսքի հիմունքները (բանավոր հաղորդում, զեկույց և այլն): Տեքստերի ճիշտ ըմտրություն՝ ոչ բարդ

գործնական բնույթի և լայն մասնագիտական բնույթի: Գրավոր խոսքի զարգացում, որն ուղեկցվում է տարբեր խոսքային ստեղծագործությունների հիմքի վրա՝ զեկույցներ, ռեֆերատներ:

### **Ֆրանսերեն լեզու**

Դասընթացի ուսուցումը, որը պայմանականորեն բաժանվում է փուլերի, հետապնդում է հետևյալ պահանջները: Ուսանողը պետք է ուսումնասիրի և յուրացնի ֆրանսերեն հնչյունների արտաբերման առանձնահատկությունները, շեշտադրությունն ու ռիթմիկ խմբերը, խոսքի մեջ ֆրանսերենին բնորոշ հնչյունների կապակցման ձևերը, ֆրանսերեն նախադասության ինտոնացիան՝ կախված նախադասության բնույթից, ուղղագրական նշանները, նվազագույն բառապաշարը՝ մոտ 4000 բառային միավոր, պետք է լինի ինչպես ընդհանուր բնույթի, այնպես էլ մասնագիտական բնույթի, խոսքային գիտելիքների ուսուցանումը պետք է ունենա տարբերակված բնույթ՝ ըստ գործածության ոլորտի (կենցաղային, տերմինաբանական, ընդհանուր գիտական, պաշտոնական և այլն), գաղափար կայուն բառակապակցությունների, դարձվածաբանական միավորների մասին, գաղափար բառակազմական հիմնական ձևերի մասին, քերականական այնպիսի գիտելիքների և հմտությունների ձեռքբերում, որոնք հնարավոր են դարձնում ուսանողի գրավոր կամ բանավոր հաղորդակցությունը ընդհանուր թեմաների շուրջ, ինչպես նաև այնպիսի գիտելիքների ուսուցում, որոնք անհրաժեշտ են մասնագիտական խոսքի զարգացման համար, Ֆրանսիայի մշակույթի, քաղաքակրթության, ազգային ավանդույթների մասին տեղեկատվության, հնարավորինս շատ և վարժ խոսելու հմտություն. առավել գործնական և հարաբերականորեն պարզ բառային-քերականական միջոցների օգնությամբ երկխոսության ծավալում կամ շարադրանք հիմնական հաղորդակցային իրավիճակներում՝ պաշտոնական և ոչ պաշտոնական շփումների ժամանակ, ծանոթացում մամուլի լեզվին (բանավոր տեղեկատվություն, զեկույցումներ), ընթերցանություն. ոչ բարդ տեքստերի ընթերցում ինչպես լայն պրոֆիլի, այնպես էլ մասնագիտական բնույթի, գրավոր խոսք. զեկույցումներ, շարադրություններ:

### **6. ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ – 60 ժամ, 2 կրեդիտ**

Մշակութաբանություն և մշակույթի պատմություն: Մշակութաբանության տեսություններ: Մշակույթի կառուցվածք և գործառույթներ: Հոգևոր մշակույթը և նրա տարրերը: Մշակութային ժառանգորդում, նորարարություն, ավանդապահություն: Չանգվածային և էլիտար մշակույթ: Արևելք-Արևմուտք մշակութային առնչություններ: Մշակույթ և քաղաքակրթություն: Նախնադարի մշակույթ և դիցաբանական աշխարհայացք: Արվեստի տեսակների առաջացումը: Հին Աշխարհի մշակույթը. Միջագետք, Հնդկաստան, Չինաստան, Եգիպտոս, Հայաստան: Կրոնա-դիցաբանական, կրոնա-փիլիսոփայական համակարգեր և արվեստ: Անտիկ Աշխարհի մշակույթը. Հունաստան, Հռոմ: Կրոնա-դիցաբանական հավատալիքներ և արվեստ: Միջնադարյան մշակույթ և գեղարվեստական ոճեր: Վերածննդի մշակույթ: Հումանիզմ և արվեստ: Մշակույթը 17-20-րդ դարերում: Դարաշրջաններ և գեղարվեստական ուղղություններ: «Մշակութաբանություն» առարկայի դասընթացը նպատակ է հետապնդում ուսանողության մշակութաբանական զգացողության դաստիարակության գործում, ձևավորում նրանց մեջ նոր գիտակցություն, առանց որի անհնար է մարդկային կյանքը, մարդու գործունեությունը մշակույթից դուրս:

### **7. ԶԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ – 90 ժամ, 3 կրեդիտ**

Քաղաքագիտության օբյեկտը և առարկան, մեթոդները և գործառույթները: Քաղաքագիտության և այլ հասարակագիտական առարկաների փոխհա-

րաբերությունները: Քաղաքական ուսմունքների զարգացման հիմնական փուլերը (Անտիկ Աշխարհ, միջնադար, նոր և նորագույն շրջան): Հայ քաղաքական մտքի ավանդույթները, արմատները, սոցիոմշակութային հիմքերը: Արդի քաղաքագիտական դպրոցները: Քաղաքականություն և քաղաքական իշխանություն: Քաղաքական իշխանության իրականացման մեխանիզմները, արդյունավետությունը և լեգիտիմությունը: Քաղաքական համակարգ: Քաղաքական ռեժիմ (վարչակարգ): Դեմոկրատիայի ժամանակակից տեսություններն ու մոդելները: Պետություն, գործառույթները, ձևերը: Պետական իշխանության մարմինները Հայաստանում: Իրավական և սոցիալական պետություն: Խորհրդարան և խորհրդարանականություն: Կառավարման նախագահական, կիսանախագահական և խորհրդարանական ձևերի համեմատական վերլուծությունը: Քաղաքական իշխանության սոցիալական սուբյեկտները: Շահերի խմբեր, քաղաքական լիդերություն և քաղաքական լիդերներ, էլիտա: Ընտրություններ և ընտրական համակարգեր: ՀՀ ընտրական համակարգը: Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: Բազմակուսակցական համակարգի կայացումը Հայաստանում: Քաղաքական գործընթացներ: Քաղաքական արդիականացում: Քաղաքական արդիականացման առանձնահատկությունները ՀՀ: Քաղաքական կոնֆլիկտներ և դրանց լուծման ուղիները: Քաղաքական տեխնոլոգիաներ: Համաշխարհային քաղաքական գործընթացներ և միջազգային հարաբերություններ: Արդի համաշխարհային հարաբերությունների աշխարհաքաղաքական վերլուծություն: Հայաստանի ազգային շահերը նոր աշխարհաքաղաքական իրավիճակում: Քաղաքական գլոբալիստիկա. ընդհանուր բնութագիրը, համամարդկային հիմնահարցերի լուծման քաղաքական ուղիները: Քաղաքական կանխատեսում:

#### **8. ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ – 120 ժամ, 4 կրեդիտ**

Պետությունն ու իրավունքը, դրանց դերը հասարակության կյանքում: Պետության և իրավունքի ծագումը, էությունը, հատկանիշները, գործառույթները, կառուցակարգը, ձևերը: Իրավունքի նորմերը և աղբյուրները: Նորմատիվային իրավական ակտերի հասկացությունը, տեսակները: Օրինականության հասկացությունը: Հայաստանի Հանրապետության իրավունքի համակարգը: Իրավունքի ճյուղերը: Սահմանադրական իրավունք: Քաղաքացիական իրավունք: Աշխատանքային իրավունք: Վարչական իրավունք: Զբեական իրավունք: Հողային իրավունք: Տրանսպորտային իրավունք: Միջազգային իրավունք: ՀՀ դատական համակարգը: Դատախազության մարմինների համակարգը: ՀՀ ոստիկանության մարմինները: Արդարադատությունը և դրա խնդիրները: Քաղաքացիական դատավարության իրավունքը: Զբեական դատավարության իրավունքը:

#### **9. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ – 120 ժամ, 4 կրեդիտ**

Փիլիսոփայության առարկան: Փիլիսոփայության ձևավորումը, հետազոտության ոլորտները, աշխարհայացքային հիմնախնդիրները: Փիլիսոփայական գիտելիքների կառուցվածքը: Փիլիսոփայության տեղը և դերը գիտության մշակույթի ոլորտում: Փիլիսոփայության զարգացման հիմնական փուլերը: Անտիկ Հունաստանի, միջին դարերի, հայոց քրիստոնեական ջատագովական, նոր և նորագույն ժամանակաշրջանի փիլիսոփայական միտքը: Ուսմունք կեցության մասին: Տարածությունը, ժամանակը, շարժումը կեցության դրսևորման եղանակ: Շարժման, ժամանակի, տարածության վերաբերյալ դասական և հարաբերականության տեսությունները: Շարժում և զարգացում: Դետերմինիզմ և ինդետերմինիզմ: Օրենք և օրինաչափություն: Գիտակցություն: Նյութականը և իդեալականը: Գիտակցականը և անգիտակցականը: Լեզու և մտածողություն: Ճանաչողություն: Առօրեական, գիտական, կրոնական, փիլիսոփայական ճանաչողություն: Գիտելիք և հա-

վատ: Ընթրնում և բացատրություն: Իմացության զգայական և ռացիոնալ աստիճանները: Ստեղծագործության, բանավեճի, փաստարկման, ինտուիցիայի դերը կենսաբանական հետազոտություններում: Ճշմարտության հիմնախնդիրը: Ճշմարտության կոնկրետությունը, Բացարձակությունը, օբյեկտիվությունը, հարաբերականությունը: Ճշմարտության չափանիշները: Գիտական ճանաչողության կառուցվածքը: Գիտական իմացության էմպիրիկ և տեսական մակարդակները: Գիտական հետազոտության մեթոդները: Գիտության դերի արժեքավորումները փիլիսոփայության մեջ: Գիտատեխնիկական հեղափոխություն: Մարդու կեցության իմաստը: Մարդը սոցիալական միջավայրի արդյունք, կենսաբանական, հոգեկան նախահիմքերի ամբողջություն: Ազատություն և պատասխանատվություն: Բարոյականություն, արդարություն, իրավունք: Գեղագիտական և կրոնական արժեքներ: Խղճի ազատություն: Բնություն և հասարակություն: Հասարակության դասային շերտավորման հիմքերը: Քաղաքացիական հասարակություն և պետություն: Ազատություն և անհրաժեշտություն: Հասարակության զարգացման օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները: Սոցիալական հեղափոխություն: Փիլիսոփայության հիմնական ուղղությունները և դպրոցները: 20-րդ դարի փիլիսոփայական հիմնական հոսանքները: Կենսաբանության և էկոլոգիայի փիլիսոփայական հիմնախնդիրները: Էկոլոգիան և քաղաքականությունը: Էկոլոգիական աղետ: Բնապահպանական շարժումներ:

#### **10. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ – 120 ժամ, 4 կրեդիտ**

Տնտեսագիտության տեսության հիմունքները: Առարկան և գործառույթները: Բարիք: Պահանջմունքներ, ռեսուրսներ: Տնտեսական ընտրություն: Տնտեսական հարաբերություններ և համակարգեր: Տնտեսագիտության տեսության զարգացման հիմնական փուլերը, մեթոդները: Միկրոտնտեսագիտություն: Շուկա, առաջարկ և պահանջարկ: Սպառողական նախընտրություն և սահմանային օգտակարություն: Պահանջարկի գործոնները: Անհատական և շուկայական պահանջարկ: Եկամտի և փոխարինման էֆեկտ: Առաձգականություն: Առաջարկը և նրա գործոնները: Սահմանային արտադրողականության անկման օրենքը: Մասշտաբի էֆեկտը: Ծախսերի տեսակները: Ձեռնարկություն: Հասույթը և շահույթը: Ձեռնարկատիրություն: Ծախսի մաքսիմալացման սկզբունքները, կատարյալ մրցակցային շուկաների արդյունավետությունը: Մենաշնորհ: Մենաշնորհատիրական մրցակցություն: Օլիգոպոլիս: Հակամենաշնորհային կարգավորում: Արտադրության գործոնների նկատմամբ պահանջարկը: Աշխատանքի շուկա: Աշխատանքի առաջարկը և պահանջարկը: Աշխատավարձ և զբաղվածություն: Կապիտալի շուկա: Տոկոսադրույք և ինվեստիցիա: Հողի շուկա: Ռենտա: Ընդհանուր հավասարակշռություն և բարեկեցություն: Եկամուտների բաշխում: Անհավասարություն: Արտաքին էֆեկտներ և հասարակական բարիքներ: Պետության դերը: Մակրոտնտեսագիտություն: Ազգային տնտեսությունը որպես ամբողջություն: ՀՆԱ-ն և նրա չափման եղանակները: Ազգային եկամուտ: Տնօրինվող անձնական եկամուտ: Գների ինդեքսները: Գործազրկությունը և նրա ձևերը: Ինֆլյացիան և նրա տեսակները: Տնտեսական պարբերաշրջանները: Մակրոտնտեսական հավասարակշռություն: Ամբողջական առաջարկ և պահանջարկ: Կայունացման քաղաքականություն: Հավասարակշռությունը ապրանքնային շուկայում: Սպառում և խնայողություն: Ինվեստիցիա: Պետական ծախսեր և հարկեր: Մուտիպլիկատորի էֆեկտը: Հարկաբյուջետային քաղաքականություն: Փողը և նրա ֆունկցիաները: Հավասարակշռությունը փողի շուկայում: Փողային մուտիպլիկատորը: Բանկային համակարգ: Դրամավարկային քաղաքականություն: Տնտեսական աճ և զարգացում: Միջազգային տնտեսական հարաբերություններ: Արտաքին առևտուր և արտաքին քաղաքականություն: Վճարային հաշվեկշիռ:

Տարադրամի կուրսը: Անցման շրջանի առանձնահատկությունները ՀՀ-ում:  
Սոցիալական ոլորտի վերափոխումները: Տնտեսության կառուցվածքային  
տեղաշարժերը: Բաց էկոնոմիկայի ձևավորումը:  
**Բուհական բաղադրիչ**

## **Ուսանողի կողմից ընտրված դասընթաց**

Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացների կրթաբլոկ  
Հանրապետական բաղադրիչ

### **1. ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՍԱԹԵՍԱՏԻԿԱ - 360 ժամ, 12 կրեդիտ**

Անալիտիկ երկրաչափություն: Ուղիղ գիծը հարթության վրա: Երկրորդ  
կարգի կորեր: Կոորդինատների ձևափոխությունը: Հարթությունը և ուղիղ  
գիծը տարածության մեջ: Երկրորդ կարգի մակերևույթներ: Գծային հանրա-  
հաշիվ: Որոշիչներ: Հակադարձ մատրից: Գծային հավասարումների համա-  
սեռ և ոչ համասեռ համակարգեր: Կրամերի կանոնը: Գաուսի մեթոդը: Վեկ-  
տորական հանրահաշիվ: Մաթեմատիկական անալիզ: Թվային հաջորդա-  
կանություններ: Չուզամետ հաջորդականություններ և նրանց հատկություն-  
ները: Մեկ փոփոխականի ֆունկցիա: Ֆունկցիայի անընդհատությունը: Ա-  
նընդհատ ֆունկցիայի հատկությունները: Ֆունկցիայի ածանցյալը: Ֆունկ-  
ցիայի հետազոտումը դիֆերենցիալ հաշվի մեթոդներով և գրաֆիկի կառու-  
ցումը: Մի քանի փոփոխականի ֆունկցիաներ: Նվազագույն քառակուսիներ  
ի մեթոդը: Կոմպլեքս թվեր: Անորոշ և որոշյալ ինտեգրալներ: Որոշյալ ին-  
տեգրալի կիրառությունները: Անիսկական ինտեգրալներ: Բազմապատիկ և  
կորագիծ ինտեգրալներ: Նրանց կիրառությունները: Մակերևութային ին-  
տեգրալներ: Դաշտի տեսության Էլեմենտները: Թվային շարքեր: Դրական  
անդամներով շարքերի զուգամիտության հայտանիշները: Կամայական ան-  
դամներով շարքերի զուգամիտությունը: Ֆունկցիոնալ շարքեր: Աստիճանա-  
յին շարք: Թեյլորի և Մակլորենի շարքեր: Ֆուրյեի շարք: Սովորական դի-  
ֆերենցիալ հավասարումներ: Առաջին կարգի համասեռ գծային և դրանց  
բերվող հավասարումներ: Երկրորդ կարգի գծային համասեռ և ոչ համասեռ  
հավասարումներ: Հավանականությունների տեսություն:

### **2. ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳԾԱԳՐՈՒԹՅՈՒՆ – 120 ժամ, 4 կրեդիտ**

**1. Գծագրական երկրաչափություն:** Ներածություն: Պրոյեկտման մեթոդնե-  
րը: Ուղղանկյուն պրոյեկտում: Մոնժի էպյուր: Կետի, ուղղի, հարթության և  
բազմանիստերի պրոյեկտումը: Դիրքային խնդիրներ: Մետրական խնդիր-  
ներ: Կետի, ուղղի, հարթության և մակերևույթների կառուցումը ըստ թվան-  
շանակիր պրոյեկցիաների: Գծագրական երկրաչափության մեջ կիրառվող  
մեթոդները: Բազմանիստեր: Կոր գծեր: Մակերևույթներ, պտտման մա-  
կերևույթներ: Դիրքային և մետրական խնդիրներ: Պտուտական մա-  
կերևույթներ: Մակերևույթների փռումը: Աքսոնոմետրիկ պրոյեկցիաներ:

**2. Ճարտարագիտական գրաֆիկա:** Կոնստրուկտորական փաստաթղթեր:  
Գծագրերի ձևավորումը: Գծեր և տառատեսակներ: Երկրաչափական գծա-  
գրություն: Տեսքեր, գրառումներ, նշանակումներ: Աքսոնոմետրիկ պրոյեկ-  
ցիաներ: Մեքենամասերի տարրերի պատկերումը և նշանակումները: Միա-  
ցումների պատկերումը: Քանդավի միացումներ: Ոչ քանդավի միացումներ:  
Մեքենամասերի էքսիզավորում: Մեքենամասերի աշխատանքային գծագ-  
րերի կազմում: Հավաքական միավորների պատկերումը: Հավաքական  
գծագրերի մասնատում: Շինարարական գծագրության տարրեր:

### **3. ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ ԵՎ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ -120 ժամ, 4 կրեդիտ**

Դասընթացի առարկան, խնդիրները, ինֆորմատիկայի դերը, համակարգիչների տեսական հիմունքները: Համակարգիչների ստեղծման ու զարգացման փուլերը: Ֆունկցիոնալ սարքերի տրամաբանական ֆունկցիաները, սարքի տրամաբանական սեման: Տրամաբանական դիզայնի սխեմա, կոնյուկցիա և բացասում գործողությունները: Համակարգիչների տեխնիկական ապահովումը, ներքին և արտաքին սարքեր, պրոցեսոր: Ինֆորմատիկայի մուտքագրման սարքեր (ստեղնաշար, ուղղորդիչ՝ մկնիկ, ցուցարկու՝ դիսփլեյ, տեսագիր՝ սկաներ և այլն): Ինֆորմատիկայի ելքավորման սարքեր (ցուցարկու, տպիչ և այլն): Արտաքին հիշասարք (Ինֆորմացիայի երկարատև պահպանման սարքեր): Ինֆորմացիայի հաղորդման սարքեր (մոդեմ, ֆաքս և այլ տիպի տերմինալներ): Համակարգիչների ծրագրային ապահովումը: Համակարգային ծրագրեր՝ օպերացիոն համակարգեր, ծրագրեր-թաղանթներ, դրայվերներ և ուտիլիտներ: Գործիքային ծրագրային ապահովումը որպես ծրագրավորման համակարգ, ծրագրավորման լեզվի համակարգը, ծրագրավորման միջավայրի համակարգը, ստանդարտ ֆունկցիաների գրադարանը և այլն: Իսկ կիրառական ծրագրային ապահովումը պարունակում է ստանդարտ ծրագրերի գրադարանը, օգտագործողի կիրառական ծրագրերը և կիրառական ծրագրերի փաթեթները: Ալգորիթմացում: Ալգորիթմացումը, խնդիրների լուծման ալգորիթմների կառուցման մեթոդները: Ալգորիթմի հատկությունները: Հաշվողական գործընթացների տեսակները, ալգորիթմի նկարագրման եղանակները, ալգորիթմի որակի որոշման եղանակները, ալգորիթմի մշակման փուլերը և կարգը: Ծրագրավորում: Ծրագրավորումը որպես ինֆորմատիկայի ճյուղ, ծրագրեր կազմելու մեթոդներն ու ձևերը: Ծրագրավորման լեզուների դասակարգումը, ծրագրավորման լեզվի տարրերը, ծրագրավորման լեզվի կառուցվածքները, ծրագրերի մշակումը, ծրագրի կատարման փուլերը: Համակարգչային համակարգեր և ցանցեր: Համակարգչային ցանցեր, նրանց տիպերը: Տեղային, բաշխված, մոլորակային և նրանց տեխնիկական ու ծրագրային ապահովումը:

### **4. ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԳՐԱՖԻԿԱ - 90 ժամ, 3 կրեդիտ**

Համակարգիչային գրաֆիկա առարկան, դերն ու խնդիրները, զարգացման ուղղություններն ու հեռանկարները: Նախագծման ավտոմատացված համակարգեր, գոյություն ունեցող ծրագրերը (AutoCAD, Unigraphics, ProEngineer, StutCAD և այլն) և դրանց համեմատական գնահատականը: AutoCAD ծրագրային փաթեթի հիմունքները և հնարավորությունները: AutoCAD-ի պատուհանը: Համակարգչային մենյուներ: Գործիքային վահանակներ: Հրամանների և կարգավիճակի տողեր: Աշխատանքային միջավայրի կարգավորումը: Կոորդինատների համակարգերը, դրանց ընտրությունը, չափման միավորների ընտրությունը, գծագրի սահմանների դոյմական և մետրական համակարգեր: Մասշտաբների ընտրություն: Երկրաչափական օբյեկտների կառուցման հրամանները: Կառուցման ռեժիմները (երկչափ համակարգում): Շերտեր և դրանց առավելությունները: Օբյեկտների գործիքաշարքը: Խմբագրման հրամանները: Էկրանային պատկերի կառավարումը և տեսքի ստեղծումը: Չափերի կիրառումը, եչկրաչափական չափեր և թույլտվածքներ: Չափերի խմբագրումը: Չափերի ոճը և չափային համակարգային փոփոխականներ: Տեքստային էկրանները մոդելի տարածության մեջ և թղթի տարածության մեջ: Ինֆորմացիայի ելքը տպագրման և գծագրման միջոցով: Գծագրի ելքը փոթերի (Plotter) վրա: Գծագրի դիրքի ընտրությունը և թղթի չափերը: Տեքստի ավելացումը գծագրերին: Գրառումները գծագրերում: Բլոկներ, դրանց կոնցեպցիան և առավելությունները: Օբյեկտների խմբավորում և խմբագրման հրամանները: Տվյալների փոխանա-



կում, կապերի խմբագրում, երկրաչափական հաշվիչ: Եռաչափ երկրաչափական օբյեկտների և մարմինների մոդելավորում: Եռաչափ մակերևույթների կառուցում: Եռաչափ ֆիգուրների ստեղծում: Կտրվածքներ: Ռենդերինգը (Render) և անիմացիան եռաչափ գծագրությունում: Հեռանկարի ստացումը: Եռաչափ մոդելի ռենդերինգը: Եռաչափ ֆիգուրների դինամիկ դիտարկում: Օբյեկտների երանգավորում: Տարածական ֆիգուրների խմբագրումը: Ստանդարտ գծագրեր՝ տեսքը վերևից, առջևից և ձախից: Բանվորական գծագրերի մշակում (հանգույցի հավաքական գծագիր և մեքենամասերի մասնատում):

#### **5. ՖԻԶԻԿԱ - 240 ժամ, 8 կրեդիտ**

Ներածություն: Դասական մեխանիկայի ֆիզիկական հիմունքները: Կինեմատիկա, օպտիկա, դինամիկա: Մեխանիկական աշխատանք, հզորություն, էներգիա: Պինդ մարմնի մեխանիկա: Հեղուկների և գազերի շարժումը: Տատանումներ և ալիքներ: Հարաբերականության հատուկ տեսություն: Մոլեկուլյար դինամիկա և թերմոդինամիկա: Մոլեկուլյար ֆիզիկա: Ջերմադինամիկա: Իրական գազեր: Բյուրեղային և ամորֆ մարմիններ: Փուլային հավասարակշռություններ անցումներ: Էլեկտրականություն: Էլեկտրաստատիկա: Էլեկտրական դաշտը դիէլեկտրիկներում: Հաստատուն էլեկտրական հոսանք: Էլեկտրական հոսանքը մետաղներում և կիսահաղորդիչներում: Էլեկտրական հոսանքը հեղուկներում և գազերում: Էլեկտրամագնիսականություն: Էլեկտրամագնիսական ինդուկցիա, ինդուկտիվություն փոփոխական հոսանք: Օպտիկա: Ճառագայթային օպտիկա: Ալիքային օպտիկա: Քվանտային օպտիկա: Ջերմային ճառագայթման օրենքները, ֆոտոէֆեկտ, լույսի ճնշումը, Կոմպտոնի էֆեկտը: Ատոմային և միջուկային ֆիզիկա: Ատոմի կառուցվածքը: Ատոմի միջուկը: Տարրական մասնիկներ: Միջուկային ռեակցիա, դրա տրոհում: Շղթայական ռեակցիաներ:

#### **6. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԻՄԻԱ - 60 ժամ, 2 կրեդիտ**

Նյութի կառույցը: Ատոմի, մոլեկուլի կառուցվածքը, քիմիական կապ: Քիմիական համակարգեր՝ լուծույթներ, դիսպերս համակարգեր, էլեկտրոքիմիական համակարգեր: Քիմիական թերմոդինամիկա և կինետիկա՝ քիմիական պրոցեսների էներգետիկական, քիմիական և ֆազային հավասարակշռություններ: Քիմիական ռեակցիայի արագությունը, կատալիտիկ ռեակցիաներ: Պարբերական համակարգը և բիոգեն էլեմենտների քիմիան, նրանց հատկությունը, ստացումը, կիրառումը: Անալիտիկ քիմիայի հիմունքները: Որակական և քանակական անալիզ: Անալիզի ֆիզիկա-քիմիական մեթոդները: Օրգանական միացությունների քիմիան՝ ածխաջրածիններ, ֆունկցիոնալ խմբերով միացություններ, ճարպեր, ածխաջրեր, սպիտակուցներ, պոլիմերներ: Քիմիական պրակտիկում:

#### **7. ԵՐԿՐԱՔՈՒՍԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ – 60 ժամ, 2 կրեդիտ**

Երկրաբուսաբանության խնդիրները: Ֆիտոցինոզների տարբերիչ հատկանիշները, տեսական կազմը: Բուսական համակեցությունների էկոլոգիան: Գլխավոր և երկրորդական էկոլոգիական գործոններ: Բուսական համակեցությունների ազդեցությունը հողի և կլիմայական պայմանների վրա: Մարգագետնային բուսականության դասակարգումը, նրա սկզբունքները: Բուսական համակեցությունների դինամիկան և էվոլուցիան: Բուսական ծածկոցի տարածքային բաշխվածության օրինաչափությունները: Բուսական համալիրներ: Երկրաբուսաբանական հետազոտությունների նշանակությունը և առանձնահատկությունները:

#### **8. ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

##### **ԵՎ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ - 120 ժամ, 4 կրեդիտ**

Դասընթացի հիմնական թեմաներն են՝ Հավանականությունների դասական, երկրաչափական, վիճակագրական սահմանումները: Գումարման,

բազմապատկման թեորեմները: Լրիվ հավանականությունների, հիպոթեզների հավանականությունների, Բեռնուլիի, Լապլասի լոկալ և ինտեգրալ բանաձևերը: Հարաբերական հաճախության նրա հավանականությունից շեղման հավանականությունը: Դիսկրետ պատահական մեծության բինոմիական, Պուասոնի, երկրաչափական բաշխման օրենքները: Մաթեմատիկական սպասումի, դիսպերսիայի և հատկությունները, ինչպես դիսկրետ, այնպես էլ անընդհատ պատահական մեծությունների համար: Չեփշևի և Բեռնուլիի բանաձևերը: Բաշխման և խտության ֆունկցիաները և նրանց հատկությունները: Նորմալ, ցուցչային և հավասարաչափ բաշխման ֆունկցիաները: Երկչափ պատահական մեծության թվային բնութագրիչները: Մաթեմատիկական վիճակագրության թվային բնութագրիչները, վստահելի հավանականություն և վստահելի միջակայքերի որոշման եղանակները և չափումների գնահատման ճշտությունը: Գծային ռեգրեսիա երկու և երեք չափանի պատահական մեծությունների համար: Վիճակագրական հիպոթեզներ և նրանց ստուգման եղանակները: Միագործոն դիսպերսիոն վերլուծություն:

### **Բուհական բաղադրիչ**

### **Ուսանողի կողմից ընտրովի դասընթաց**

Ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթաբլոկ  
Հանրապետական բաղադրիչ

#### **1. ՀՈՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԼԱՆԴՇԱՖՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ – 150 ժամ, 5 կրեդիտ**

Հողի դերը կենսոլորտում, հողագոյացման գործոններն ու պայմանները, հիմնական հողային գործընթացներ, լիթոսֆերայի, կենսոլորտի ու արտաքին միջավայրի միջև էներգիայի և նյութերի փոխանակում, գոտիականության օրինաչափությունը, հիմնական հողատիպերը և դրանց հատկություններն ըստ բնահողային գոտիների, հողերի կառուցվածքն ու կազմը, հողային գործընթացների կանխատեսումը, հողերի փոփոխությունները, դրանց իրացման, մեխորացման և ռեկուլտիվացիայի հետևանքով, հողերի բուսիտում և տնտեսական գնահատում, հողերի կուլտուրականացում, հողերի էրոզիա: Լանդշաֆտագիտությունը որպես բնապահպանման և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման հիմք, բնական լանդշաֆտների կազմը, կառուցվածքը, լեռնային երկրների լանդշաֆտների ձևավորման առանձնահատկությունը, ուղղաձիգ գոտիականություն, լեռնային լանդշաֆտների դինամիկ հավասարակշռության խախտման պատճառները, կուլտուրական լանդշաֆտներ, լանդշաֆտների պահպանման ձևերը:

#### **2. ԵՐԿՐԱԳՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ – 90 ժամ, 3 կրեդիտ**

Ներածություն: Երկրագունդը տիեզերական տարածությունում, նրա առաջացման հիմնական հիպոթեզները: Ձևը, չափերը, կառուցվածքը: Գեոսֆերաների բաղադրությունը, հատկությունները: Պատկերացում կենսոլորտի և տեխնոսֆերայի մասին: Երկրակեղև: Միներալներ, ֆիզիկական և քիմիական հատկությունները: Դասակարգումը: Ագրոմիներալներ: Լեռնային ապարներ: Դասակարգումը: Երկրաժամանակագրություն: Երկրաբանական պրոցեսներ և երևույթներ: (Էնդոգեն և Էկզոգեն): Գեոմորֆոլոգիա: Չորրորդական նստվածքներ: Երկրաբանական քարտեզներ և կտրվածքներ: Հիդրոերկրաբանություն: Խոնդիրները, հիմնական բաժինները և նշանակությունը: Ջուրը բնության մեջ: Ջրի շրջապտույտը բնության մեջ: Ջրի տիպերը միներալներում և լեռնային ապարներում: Լեռնային ապարների ջրային և ֆիզիկական հատկությունները: Ստորերկրյա ջրերի առաջացման պայմանները, դասակարգումը: Ստորերկրյա ջրերի հատկությունները և բաղադրու-

յունը: Ստորերկրյա ջրերի հիմնական տարատեսակները և դրանց բնութագիրը: Աղբյուրները: Ստորերկրյա ջրերի դինամիկայի հիմունքները: Ստորերկրյա ջրերի ռեժիմը և բալանսը: Գրունտաբանության հիմունքները: Ինժեներա-երկրաբանական երևույթներ և պրոցեսներ: Ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական հետազոտությունների խնդիրները և նշանակությունը: Ստորերկրյա ջրերի պաշարները և պահպանումը: Ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական հետազոտությունների ձևերը և էությունը:

### **3. ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ, ՄԱՐԳԱԳԵՏՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆՋԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ – 90 ժամ, 3 կրեդիտ**

Բուսաբուծությունը և բանջարաբուծությունը որպես գյուղատնտեսական արտադրության հիմնական ճյուղեր: Դաշտային մշակաբույսերի խմբավորումը: Հիմնական հացահատիկային տեխնիկական մշակաբույսերի կենսաբանական առանձնահատկությունները և մշակության տեխնոլոգիաները: Կերային մշակաբույսեր: Կարևորագույն մշակաբույսերի մշակության տեխնոլոգիաները: Հանրապետությունում մշակվող հիմնական բանջարաբոստանային մշակաբույսերի կենսաբանական և մշակության առանձնահատկությունները: Բանջարանային մշակաբույսերի մշակությունը: Մարգագետնային կերարտադրության դերն ու նշանակությունը, այն որպես գիտության և արտադրության կարևոր ճյուղ: Բնական կերհանդակների դասակարգումը: Խոտհարքների և արոտավայրերի բուսականության տիպերը և դրանց փոփոխությունը մարդու գործունեության շնորհիվ: Խոտհարքների և արոտավայրերի մակերեսային բարելավման էությունը և նշանակությունը, բարելավման տեխնոլոգիան և կուլտուր-տեխնիկական աշխատանքները: Խոտհարքների և արոտավայրերի արմատական բարելավումը: Ցանովի արոտավայրերի ստեղծումը: Կանաչ կոնվեյերներ: Արոտաշրջանառություն:

### **4. ԱՅԳԵՊՏՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ – 60 ժամ, 2 կրեդիտ**

Պտղաբուծության կենսաբանական հիմունքները (պտղատու բույսերի կողմից աճման և զարգացման մեծ և փոքր շրջանների անցման և կիրառվող ագրոտեխնիկայի առանձնահատկությունները):

Տնկանյութի աճեցման տեխնոլոգիան՝ հողի նախապատրաստման, կիրառվող ագրոտեխնիկական միջոցառումների առանձնահատկությունները և օգտագործվող գյուղ. տեխնիկական պտղատու բույսերի տնկանյութի արտադրման ընթացքում: Պտղատու այգու հիմնումը և խնամքը՝ հողի բարելավմանն ուղղված միջոցառումները և կիրառվող մեքենայական աշխատանքները պտղատու այգու հիմնադրման ժամանակ, պտուղների արտադրության ընթացքում միջշարքային և մերձբնային տարածությունների մշակության, ձևավորման, էտի, հիվանդությունների և վնասատուների դեմ տարվող պայքարի միջոցառումների, բերքահավաքի առանձնահատկությունները և օգտագործվող մեքենաներն ու գործիքները: Պտղատու բույսի կառուցվածքը, պտղատուների կենսաբանական-արտադրական առանձնահատկությունների բնութագրումը, պտղատու բույսերի ձևավորման և էտի գլխավոր սկզբունքները: Խաղողագործություն: Խաղողագործության կենսաբանական հիմունքները (խաղողի վազի կենսաբանական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, կենսաբանական ցիկլերը՝ վազի հարաբերական հանգստի և վեգետացիայի ժամանակաշրջանի վեց փուլերի նկարագրումը և այգու խնամքի աշխատանքների կազմակերպումը): Խաղողի վազի էկոլոգիան՝ արտաքին միջավայրի գործոնների ազդեցությունը վազի աճի և բերքատվության վրա: Հողամասի ընտրությունը, նախապատրաստումը այգի հիմնադրելու և այգետնկման համար, բերքատու այգու խնամքը (հողամասի ընտրության և նախապատրաստման աշխատանքները, տե-

ղաճևումը, այգու հիմնադրումը՝ օգտագործվող տնկանյութը, նրա նախապատրաստումը տնկման համար, տնկման եղանակները և տեխնիկան, ընթացքում կիրառվող գյուղ. մեքենաները, բերքատու այգու հողի մշակությունը, պարարտացումը, ոռոգումը, շպալերայի հիմնադրումը, թեք լանջերի դարավանդումը և այդ աշխատանքները կատարելու համար կիրառվող գյուղ. տեխնիկան): Խաղողի վազի արտաքին կառուցվածքը, վեգետատիվ բազմացման եղանակները և վազերի ձևավորման համակարգերը:

**5. ԱԳՐՈՒԿՈՒԼՈՒԿԻԱ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ – 120 ժամ, 4 կրեդիտ**

Կենսալոբարը և մարդը: Էկոհամակարգեր, օրգանիզմի և միջավայրի փոխհարաբերությունները: Ագրոէկոհամակարգերը և դրանց գործելակերպը տեխնոգենեզիսի պայմաններում: Շրջակա միջավայրի գլոբալ հիմնախնդիրները: Բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման և բնության պահպանության էկոլոգիական սկզբունքները: Միջազգային համագործակցությունը և շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրները: Մթնոլորտի, օդի, ջրի, հողերի, բուսական և կենդանական աշխարհի պահպանությունը և դրանց արդյունավետ օգտագործումը: Քիմիացման էկոլոգիական հիմնախնդիրները: Մեքենայացման, հողերի ոռոգման և չորացման էկոլոգիական հիմնախնդիրները: Երկրագործության ավանդական և այլընտրանքային համակարգերը: Էկոլոգիական տեսակետից անվտանգ գյուղատնտեսական մթերքների արտադրության տեխնոլոգիաները: Կայուն էկոհամակարգերի ստեղծման սկզբունքները: Ռեսուրսախնայողական տեխնոլոգիաները գյուղատնտեսության մեջ: Ագրոէկոլոգիական մոնիթորինգ, տարածքների էկոլոգիական վիճակի գնահատումը: Էկոլոգիական քաղաքականությունը և գյուղատնտեսության էկոլոգիացման հիմնախնդիրները:

**6. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՅԱՑՈՒՄ – 120 ժամ, 4 կրեդիտ**

Առարկան բաղկացած է 4 բաժիններից՝

1. Տրակտորներ և ավտոմոբիլներ, այս բաժնում ուսանողը պետք է ծանոթանա գյուղ. արտադրությունում օգտագործվող տրակտորների, ընդհանուր կառուցվածքին, աշխատանքին և տեխնիկատնտեսական ցուցանիշներին:
2. Գյուղատնտեսական մեքենաներ, այս բաժնում ուսանողը պետք է ծանոթանա հողի մշակության, ցանքի ու տնկման, բույսերի խնամքի ու պաշտպանության, կերերի հավաքման ու հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի, հացահատիկի տրման ու տեսակավորման, ինչպես նաև մեխորատիվ մեքենաների կառուցվածքին ու աշխատանքին:
3. Անասնապահական ֆերմաների մեքենայացում, այս բաժնում ուսանողը պետք է ծանոթանա կերերի նախապատրաստման ու բաշխման, ջրամատակարարման, կթի ու կաթի նախնական մշակման, ոչխարների խտտի ու բերքի տեսակավորման:
4. Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործումը, այս բաժնում ուսանողը պետք է ծանոթանա արտադրական գործընթացների տեսակներին, մեքենատրակտորային ագրեգատների (ՄՏԱ) դասակարգման սկզբունքներին, դրանց տեխնոլոգիական և շահագործման բնութագրերին, ՄՏԱ համալրման եղանակներին, դրանց կինեմատիկական և տեխնիկատնտեսական ցուցանիշներին (արտադրողականության, աշխատածախսումների, վառելանյութի ծախսի) որոշման սկզբունքներին, պատկերացում կազմի ՄՏԱ շրջադարձի ձևերի ու շարժման եղանակների մասին, ծանոթանալ բուսաբուծությունում ՄՏԱ շահագործման դրույթներին (օպերացիոն-տեխնոլոգիական, մեքենայացված աշխատանքների տեղնոլոգիական քարտ, հացահատիկի, կարտոֆիլի և այլ մշակաբույսերի մշակության և բերքահավաքի, տեխնոլոգիաներ և այլն), գաղափար կազմի

տրակտորների, տեխնիկական սպասարկումների և ադտորոշման մասին, ծանոթանալ մեքենատրակտորային պարկի նախագծման, նավթային տնտեսության կազմակերպման և տեխնիկական միջոցների պահպանման հարցերին:

**7. ՄԵԼԻՈՐԱՏԻՎ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ – 120 ժամ, 4 կրեդիտ**

Ներածություն: Ընդհանուր տեղեկություններ մեխորատիվ և շինարարական մեքենաների, դրանց հակաֆիլտրացիոն երեսապատման մեքենաներ: Ջրանցքի նորոգման և խնամքի մեքենաներ: Ջրանցքամաքրիչներ: Փակ հորիզոնական դրենաժի և խողովակաշարի անցկացման մեքենաներ: Հողերի իրացման նախապատրաստման և կուլտուր-տեխնիկական աշխատանքների մեքենաներ՝ թփուտահանիչ, անտառի ջարդման և կտրման մեքենաներ, արցանավոր ծառատապալման մեքենաներ, քարհան մեքենաներ, հողերի մշակման մեքենաներ: Հողերի ջրման նախապատրաստման մեքենաներ, դաշտերի հարթեցման և հարթագծման մեքենաներ, կոշտ բացվող և շարժական շրջանակով մեքենաներ, շերտի ծավալի և բարձրության ավտոմատ կանոնավորման հարթագծիչներ: Գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման մեքենաներ և տեղակայանքներ:

**8. ԱՆԱՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ – 60 ժամ, 2 կրեդիտ**

Գյուղատնտեսական կենդանիների անատոմիայի և ֆիզիոլոգիայի հիմունքներ: Գյուղատնտեսական կենդանիների բուծման և կերակրման առանձնահատկությունները, տավարամսի, ոչխարամսի, թռչնամսի, խոզի մսի արտադրության տեխնոլոգիան: Կաթի արտադրության տեխնոլոգիան: Ձիաբուծության, այծաբուծության, ձկնաբուծության և մեղվաբուծության վարման հիմունքները:

**9. ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ – 60 ժամ, 2 կրեդիտ**

Չափագիտության դերը արտադրանքի որակի բարձրացման մեջ: Հասկացություն ֆիզիկական մեծությունների մասին: Ֆիզիկական մեծությունների չափումը: Չափման հիմնական հավասարումը: Ֆիզիկական մեծությունների չափը: Ֆիզիկական մեծությունների միավորները և նրանց դասակարգումը: Ֆիզիկական մեծությունների միավորների համակարգերը, միավորների ընտրությունը, ածանցյալ միավորներ, առաջացման կանոնները: Միավորների միջազգային համակարգ (ISO): Չափման ձևերի և եղանակի չափագիտական դասակարգումը ըստ արդյունքի, ճշգրտությունը որոշող պայմանները: Չափման եղանակների առանձնահատկությունները: Չափման սխալանքների դասակարգումը՝ բացարձակ և հարաբերական: Չափման սխալանքները՝ սխտեմատիկ և պատահական: Չափումների ճշգրտությունը, գույզամիտությունը և վերարտադրելիությունը: Պատահական սխալանքների քանակական գնահատման հավանականության տեսության տարրերը: Կվալիմետրիա, որակի ցուցանիշները, գնահատման հիմնական հասկացությունները: Ստանդարտացման հիմնական խնդիրները: Հայաստանի ստանդարտացման ծառայությունները: Ստանդարտացման պետական համակարգ: Ստանդարտացում և որակ: Ստանդարտացման դերը համափոխարինելիության ապահովման մեջ: Հասկացություն սերտիֆիկացման մասին, սերտիֆիկացման սխեման: Սերտիֆիկացման համակարգի հիմնական օրենքները: Սերտիֆիկացման համար փորձարկումները, միջազգային սերտիֆիկացում:

**10. ԳՅՈՒՎ. ԷԼԵԿՏՐԻՖԻԿԱՑՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ – 60 ժամ, 2 կրեդիտ**

Ներածություն: Հաստատուն և փոփոխական սինուսոիդալ հոսանքների միաֆազ և եռաֆազ համակարգեր: Միաֆազ և եռաֆազ հոսանքների գեներատորների, տրանսֆորմատորների և ասինխրոն շարժիչների կառուց-

վածքն ու աշխատանքի սկզբունքը: Գյուղատնտեսության արտադրական օբյեկտների տեխնոլոգիական գծեր: Էլեկտրական լուսավորում և ճառագայթում: Օպտիկական ճառագայթիչ տեղակայանքների դերը գյուղատնտեսությունում: Էլեկտրատաքացում և էլեկտրատեխնոլոգիա: Հողի տաքացումը, մշակումը, վարակազերծումն ու աղազերծումը էլեկտրական հոսանքով: Գյուղատնտեսական կուլտուրաների սերմերի մաքրումն ու մշակումը մագնիսական բարձր հաճախականության էլեկտրական դաշտերում:

#### **11. ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ – 90 ժամ, 3 կրեդիտ**

Ներածություն: «Կենսագործունեության անվտանգություն» առարկայի դերը, նպատակն ու խնդիրները: «Մարդ-մեքենա-միավայր» համակարգը: Վտանգավոր և վնասակար արտադրական գործոնների բնութագիրը և առողջ ու անվտանգ աշխատանքային պայմանների ստեղծման հիմնական ուղիները: «Կենսագործունեության անվտանգություն» բնագավառին վերաբերող նորմատիվա-իրավական փաստաթղթերը, հիմնական օրենսդրական ակտերը, աշխատանքային, քաղաքացիական և քրեական օրենսգրքերը: «Կենսագործունեության անվտանգության» ծառայության կառուցվածքը և խնդիրները, ղեկավարների և մասնագետների իրավունքներն ու պարտականությունները այս բնագավառում: Արտադրական վնասվածության և մասնագիտական հիվանդությունների ուսումնասիրման մեթոդները, տնտեսական հետևանքները և գնահատման եղանակները: Աշխատատեղերի օդերևութաբանական և միկրոկլիմայական պարամետրերի նորմավորման սկզբունքները և նորմաները, չափման և հսկման միջոցներն ու եղանակները: Արտադրական աղմուկ, վիբրացիա և վնասակար ճառագայթումներ: Դրանցից պաշտպանվելու եղանակները, չափման և հսկման միջոցները: Հիդրոտեխնիկական և շինարարական ու մեխորատիվ մեքենաների և տեխնոլոգիական սարքավորումների մոնտաժի, շահագործման և նորոգման աշխատանքների անվտանգությունը: Անվտանգությունը հիդրոտեխնիկական-շինարարական, մեխորատիվ, բետոնային և պայթեցման աշխատանքների ընթացքում: Էլեկտրահարվածից պաշտպանվելու կազմակերպչական միջոցառումներն ու տեխնիկական միջոցները: Ամպրոպապաշտպանություն: Էներգաուժային և բեռնամբարձ տեղակայանքների շահագործման անվտանգությունը: Հրդեհ, հրդեհների սոցիալ-տնտեսական հետևանքները: Ծեփերի և շինությունների հրակայունությունը, դրա բարձրացման եղանակները: Կրակմարիչ տեխնիկա: Տեսակները, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը: Հակահրդեհային ահագանգում և ջրամատակարարում: Հրդեհի ժամանակ մարդկանց էվակուացիայի, նյութական միջոցների հեռացման և պահպանման կարգը:

#### **12. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ – 150 ժամ, 5 կրեդիտ**

Ներածություն: Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության համակարգը, խնդիրներն ու նշանակությունը: Քաղաքացիական պաշտպանության կառուցվածքն ու կազմավորումները: Արտակարգ իրավիճակներ, դրանց դասակարգումը, բնութագրերը և կանխարգելման ուղիները: Ռադիացիոն և քիմիական վարակման օջախներ: Տեղանքի ռադիոակտիվ վարակում, ռադիոակտիվ վարակվածության աղբյուրները և ռադիոակտիվ ճառագայթման չափման միավորներ: Մարտական թունավոր քիմիական նյութերի դասակարգումը, բնութագիրը, ներգործության ձևերը և դրանցից պաշտպանվելու ձևերը: Ռադիացիոն և քիմիական իրադրության գնահատման մեթոդները: Դոզաչափական և քիմիական հետախուզության սարքերի տեսակները, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքները: Բնակչության պաշտպանության կազմակերպումը արտակարգ և պատերազմական

իրավիճակներում: Ապաստարաններ, հակառադիացիոն և պարզագույն թաքստոցներ: Անհատական պաշտպանական միջոցների տեսակները, դրանց պահպանման, բաշխման և օգտագործման կարգը: Արտակարգ իրավիճակների ռիսկի գնահատումը: Ռիսկի կվանտիֆիկացիան, անհատական ռիսկի ուսումնասիրման և գնահատման մեթոդները: Արտակարգ և պատերազմական իրավիճակներում գյուղատնտեսական օբյեկտների գործունեության կայունության ապահովման հիմնական ուղղություններն ու մեթոդները: Արտակարգ և պատերազմական իրավիճակներում փրկարարական և անհետաձգելի վթարային-վերականգնողական աշխատանքների կազմակերպումն ու անցկացումը: Գյուղատնտեսական արտադրության վարումը ռադիոակտիվ աղտոտվածության պայմաններում:

### **13. ԳԵՈՂԵՉԻԱ - 270 ժամ, 9 կրեդիտ**

Ներածություն: Տեղեկությունների երկրի ձևի և չափերի մասին: Նրա մակերևույթի պատկերումը հատակագծերի և քարտեզների վրա: Տեղագրական հատակագծերի և քարտեզների մոմենկլատուրաները, դրանց շրջանակների սահմանումը աշխարհագրական երկարության և լայնության հաշվումը և գրառումը: Հասկացողություն գեոդեզիական աշխատանքների կազմակերպման մասին: Գծերի երկարությունների չափումը, դրանց ճշտության գնահատումը: Ժամանակակից սարքերով գծերի չափումը և դրանց ճշտության գնահատումը լուսահեռաչափ, անդրադարձիչ, էլեկտրատախետմետր, գաղափար “DISTO<sup>TM</sup>” տիպի էլեկտրոնային ռուլետկաների մասին: Հորիզոնական և թեքման անկյունների չափում, դրանց չափման եղանակները: Չափման արդյունքների ճշտությունների գնահատումը: Գաղափար ժամանակակից անկյունաչափական գործիքների էլեկտրատախետմետրերի մասին: Նիվելիրացում: Նիվելիրացման եղանակները: Դրանց ճշտությունների գնահատումը: Բարդ նիվելիրացում: Նիվելիրացման դասերը և դրանց ճշտությունների պահպանման մեթոդները: Նիվելիրացիոն չափաձողեր, դրանց ստուգումները և ճշտություններն ըստ դասերի (ինվարյա ռեյկաներ): Գաղափար ժամանակակից նիվելիրների մասին (լազերային և էլեկտրահաշվարկիչ նիվելիրներ):

### **14. ՄԵԼԻՈՐԱՅԻԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ – 270 ժամ, 9 կրեդիտ**

Ներածություն: Ընդհանուր տեղեկություն մելիորացիայի մասին: Ռոռզման մելիորացիայի անհրաժեշտությունը և կիրառման պայմանները: Ռոռզման ազդեցությունը հողի, մշակաբույսի և բերքատվության վրա: Ռոռզման նպատակները և խնդիրները: Ռոռզման աղբյուրները և ջրի որակական պահանջները: Տերիտորիայի ապահովվածությունը բնական խոնավությամբ: Գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման ռեժիմը: Գունարային ջրասպառումը: Հողում խոնավության պաշարի որոշումը: ԳՄԽ-ի սահմանումը: Ռոռզման և ջրման նորմերի որոշումն ու սահմանումը: Գյուղատնտեսական մշակաբույսերի համակցության ոռոգման ռեժիմը, հիդրոմոդուլի գրաֆիկների կազմումը և կիրառման պայմանները: Ռոռզման համակարգերը, նրանց կառուցվածքը, ջրանցքների կոնստրուկցիաները և ծախսերի որոշումը: Ռոռզման ջրանցքների ջրի կորուստների որոշումը, ջրանցքների հիդրավիկական հաշվարկը, ջրանցքների, ներտնտեսային , միջտնտեսային ցանցերի և ոռոգման համակարգի ՕԳԳ-ի որոշումը: Ռոռզման մեքենայական համակարգը, պոմպային ագրեգատների թվի և պոմպի տիպի ընտրումը, ներծծման և մղման խողովակաշարերի հաշվարկը, պոմպերի զուգահեռ և հաջորդական աշխատանքը: Ռոռզելի հողերի հարթագծումը, գյուղատնտեսական մշակաբույսերի ջրելու եղանակները և տեխնիկան (մակերեսային, ենթահողային, կաթիլային, անձրևացմամբ): Ռոռզման ջրամբարներից, նրա հիմնական չափերի որոշումը: Ռոռզման համակարգերի շահագործումը, մելիորացիայի տնտեսական արդյունավետությունը: Ռոռզելի հողատարածք-

ների գերխոնավացման և աղակալման հիմնական պատճառները և պայքար նրանց դեմ: Չորացման համակարգը, չորացման տեսակները և խնդիրները, չորացման մեթոդները, աղուտ և ալկալի հողերի մելիորացիան: Չորացման եղանակները և տեխնիկան, դրենաժների տեսակները և հաշվարկը, ջրընդունիչները և նրանց կարգավորումը: Հողերի ջրային էրոզիան, դարավանդների տեսակները և նրանց հաշվարկը: Ընդհանուր հասկացողություն գյուղատնտեսական ջրամատակարարման և ջրաբքիացման մասին, ջրամատակարարման աղբյուրները, համակարգերը և սխեմաները, ջրի քանակի որոշումը ջրամատակարարման մեջ:

#### **15. ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ – 120 ժամ, 4 կրեդիտ**

Հողի կազմն ու հատկությունները՝ հողառաջացնող ապարներ, հողագոյացման գործընթացներ և հողային պրոֆիլի ձևավորումը, հողերի մեխանիկական և հանքաբանական կազմերը, հողի օրգանական մասը և կլանողականության ունակությունը, հողի ստրուկտուրան՝ հողերի ֆիզիկական և ֆիզիկամեխանիկական հատկությունները, հողերի ջրային հատկությունները, հողերի ջրային, օդային և ջերմային ռեժիմները, հողի էրոզիան և պայքարը նրա դեմ, հողերի բերրիությունը, հողերի քիմիական մելիորացման մեթոդները, հանքային պարարտանյութերը, միկրոտարրերը և միկրոպարարտանյութերը, հողերի աշխարհագրությունը, հողերի կարգաբանումը, հողերի տեղաբաշխման օրինաչափությունները, տարբեր բնահողային գոտիների հողատիպերը, հողերի հաշվառումն ու քարտեզագրումը, հողերի որակական գնահատումը:

**Բուսական բաղադրիչ**

### **Ուսանողի կողմից ընտրովի դասընթացներ**

#### **Մասնագիտական դասընթացների կրթաբլոկ**

**Հանրապետական բաղադրիչ**

#### **1. ՏԵՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ – 210 ժամ, 7 կրեդիտ**

Տեղական նշանակության ճանապարհների ցանցի զարգացումը գյուղական շրջաններում: Ընդհանուր տեղեկություններ գյուղական ճանապարհների մասին: Տեղական նշանակության ճանապարհների ցանցի հետազոտումը: Գնահատականի տարրերը հատակագծի վրա՝ ճանապարհի ծրագծման առանձնահատկությունները, շրջանային և անցումային կորեր, նրանց տարրերը, ոլորապտույտներ, (ուղեգալարներ), ճանապարհի հատումը և միացումը միևնույն և տարբեր մակարդակների վրա: Պահանջներ ճանապարհի երկայնական կտրվածքի նախագծման համար: Գնահատականի երկայնական կտրվածքի նախագծումը, ուղղաձիգ կորեր, երկայնական թեքություններ: Գնահատականի լայնական կտրվածքը, նրա տարրերը: Հողային պաստառը լիցքերում, հանույթներում և սարալանջերում: Հողային պաստառի լայնական տիպային կտրվածքներ: Գնահատականի ջրահեռացում: Գնահատականի ջրաջերմային ռեժիմը, ջրահեռացման համակարգեր, ջրթող կառուցվածքներ: Գնահատականի հագուստը: Տեղական նշանակության ճանապարհների վրա կիրառվող ճանապարհի հագուստները, նրանց կոնստրուկցիան, կա-



ռուցումը և կառուցման համար անհրաժեշտ շինարարական նյութերը: Ճանապարհի շինարարության համար անհրաժեշտ նյութերի հաշվարկը, շինարարության օրացուցային գրաֆիկ: Ճանապարհների շինարարությունը, պահպանումը, վերանորոգումը: Ճանապարհի սարքավորումը:

## **2. ՖՈՏՈԳՐԱՍՄԵՏՐԻԱ - 120 ժամ, 4 կրեդիտ**

Աերտտիեզերական հանույթի մեթոդները, դրանց օգտագործումը հողաշինարարական և հողային կադաստրի նպատակների համար: Հանույթային համակարգերի տարրերի օպտիմիզացիան: Հանույթի տեխնիկական պարամետրերի բնութագրումը: Հանույթային տարրերի օպտիմիզացիան, հանույթի կատարման պայմանները և պարամետրերը: Գյուղատնտեսական և կադաստրային հատակագծային հանույթը և վերծանումն ու մոնո (մեկ) նկարների մշակումը: Առաջնային և երկրորդական ինֆորմացիոն մոդելներ և դրանց օգտագործումը հողաշինարարության մեջ: Կենտրոնական պրոյեկցիայի տարրերը և հարթությունները: Կիրառական ֆոտոգրամմետրիա, մեկական նկարների թվանշանային մշակումը (կամ դրանց դրվագները), նկարների ստերեոֆոտոգրամմետրիական թվանշանային մշակումը: Լրատվական և նորացման բազային տվյալների ստեղծման տեխնոլոգիան:

## **3. ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ – 90 ժամ, 3 կրեդիտ**

Քարտեզագրական պատմական տվյալներն ու զարգացումը, կիրառվող պրոյեկցիաները, գլխավոր ուղղությունները: Քարտեզագրության տեսական հիմունքները: Քարտեզների ստեղծման տեխնոլոգիան, նախագծման յուրահատկությունները: Հողային ռեսուրսների քարտեզների կազմումը և օգտագործումը: Քարտեզների ստեղծման համակարգչային տեխնոլոգիան: Գեոդեզիական կոորդինատներից հարթ ուղղանկյուն կոորդինատային համակարգին անցնելու կարգը 1:25000, 1:10000 մասշտաբների: Քարտեզների ընդհանրացում: Սարքեր՝ մաթեմատիկական հիմքի կառուցման համար:

## **4. ԵՐԿՐԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀՈՂԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱԿԱՐԳԵՐ -210 ժամ, 7 կրեդիտ**

Տեղեկատվական համակարգերի կազմը և կառուցվածքը, հիմնական տարրերը, գործելակարգը: Տեղեկատվական համակարգերի դասակարգումը: Վավերագրական և փաստագրական համակարգեր: Համակարգերի օգտագործողների շփման լեզուն: Տվյալների մշակման տեխնոլոգիան: Տվյալների ամբողջականությունը և պաշտպանությունը: Տեղեկատվական համակարգերի իրացման ծրագրային միջոցները: Ընդհանուր համակարգային ծրագրային ապարատային միջոցներ: ՏՀԿՀ (տվյալների հենքի կառավարման համակարգ), կիրառական ծրագրեր: Տեխնիկական միջոցների համալիրը: Տեղեկատվական համակարգերի կազմակերպչական և իրավական ապահովումը: Համաշխարհային ինֆորմացիոն ռեսուրսները և ցանցերը, նրանց փոխազդեցության մեթոդները և միջոցները: Տեղեկատվական, ծրագրային և այլի ապահովվածության ստանդարտացում: Ստանդարտացման էությունը, հիմնական պրոցեսների դասակարգումը, մեթոդները և միջոցները: Ստանդարտացման ազգային և համաշխարհային մակարդակները: Հասկացությունն աշխարհագրական և հողատեղեկատվական համակարգերի մասին (ԵՏՀ և ՀՏՀ), նրանց կառուցվածքը, դասակարգումը և կիրառումը: ԵՏՀ-ում և ՀՏՀ-ում տեղեկատվության արտացոլումը և պահումը, ներկայացման ուղիները: Տեղեկատվական և իմացությունը ԵՏՀ-ում և ՀՏՀ-ում: Հասկացություն հողաշինարարական էքսպերտ համակարգերի մասին և նրա ինտեգրացումը հողաշինարարական ավտոմատ նախագծման աշխարհագրական և հողային համակարգերի հետ համակարգչային հողաշինարարական քարտեզների և հատակագծերի ստեղծումը: Հողաշինարարական արտադրությունում ԵՏՀ և ՀՏՀ ստեղծումն ապահովող միջոցների նկարագիրը: Երկրատեղեկատվական համակարգերի տեղը հողային կադաստրային և հողաշին-

նարարության ինֆորմացիոն մատակարարման մեջ: ԵՏՀ-ի և ՀՏՀ-ի նպատակը, խնդիրները, մշակման սկզբունքները և տեխնոլոգիան և կիրառությունը հողակադաստրային և հողաշինարարական գործունեություններում:

**5. ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ – 90 ժամ, 3 կրեդիտ**

Առարկան, նրա կապը գեոդեզիայի և այլ մասնագիտական առարկաների հետ: Առարկայի ուսումնասիրման մեթոդը, խնդիրներն ու բովանդակությունը: Պատմական ակնարկ հողաշինարարության գիտության առաջացման ու զարգացման մասին: Հողաշինարարության օբյեկտը, տեսակները: Հողերի արդյունավետ օգտագործման խնդիրները: ՀՀ հողային ռեսուրսները, նրանց ժամանակակից և հեռանկարային օգտագործման նախագծերն ու պլանները: ՀՀ աշխարհագրական դիրքը և ընդհանուր բնութագիրը, նախագիծ հասկացողության սահմանումը: Նախագծերի դասակարգումը և նախագծման փուլերը: Տեխնիկական նախագծի տարբերությունը նախագծման մյուս փուլերից: Աշխատանքային գծագրերի փուլը, նրա հիմնական նպատակը:

**6. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐ -180 ժամ, 6 կրեդիտ**

Հասկացողություն անշարժ գույքի մասին, նրա հիմնական խմբերը, արժեքի և գնի տեսությունը: Հողի և անշարժ գույքի գնահատման հիմնական ֆունկցիաների և սկզբունքների ուսումնասիրումը: Հողի և անշարժ գույքի գնահատման մեթոդները: Հիպոթեքային վարկեր, անշարժ գույքի գրավը, հողի արժեքը անշարժ գույքի գնի մեջ: Անշարժ գույքի արդյունավետ և էֆեկտիվ օգտագործման սկզբունքը, շենքերի և շինությունների գնահատման մեթոդիկան, գնահատման գործունեության ինֆորմացիոն ապահովումը: Հողի և անշարժ գույքի գնահատման գործընթացի ավտոմատացումը: Անշարժ գույքի տվյալների բանկի մշակումը: Համայնքային հողերի և սեփականության օբյեկտների կառավարումը: Անշարժ գույքի շուկայի վերլուծությունը: Անշարժ գույքի առանձին օբյեկտների և քաղաքային տարածքների զարգացման նախագծերի մշակումը: Ինֆորմացիոն տեխնոլոգիաների, մոդելավորման և ժամանակակից տեխնիկայի կիրառումը հողի և այլ անշարժ գույքի գնահատման ժամանակ: Բնակավայրերի գույքագրման և գոտիավորման տեխնիկական առաջադրանքի կազմումը: Անշարժ գույքի իրավունքի և նրա հետ գործարքի իրավունքի գրանցումը: Բնակավայրերի սահմաններում հողային հարաբերությունների կարգավորումը: Հողի օգտագործման, շրջակա միջավայրի, հատուկ օբյեկտների պահպանման պետական հսկողության իրագործումը: Անշարժ գույքի վիճակի և դինամիկայի (առք ու վաճառքի գործընթացի, սեփականության օբյեկտների, հիպոթեքի, էկոլոգիական և տեխնիկական փորձաքննության) վերլուծությունը: Քաղաքային և կադաստրային տեղեկատվական համակարգերի և տեխնոլոգիաների ստեղծման համար պլանների, ծրագրերի և մեթոդների մշակումը:

**7. ՀՈՂԱԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳԵՈԴԵՉԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ – 210 ժամ, 7 կրեդիտ**

Առարկայի խնդիրները: Գեոդեզիական աշխատանքների դերը, հողաշինարարական նախագծման, հողային կադաստրի, բնակավայրերի հատակագծման և մեխորացիայի բնագավառներում: Քարտեզագրական նյութերի տեսակները, օգտագործումը հողաշինարարության և հողային կադաստրի մեջ և նրանց նկատմամբ ներկայացվող պահանջները: Հողօգտագործման հատակագծերի կազմման տեխնոլոգիան: Տեղագրական հիմքի կազմումը նախագծման նպատակով: Հասկացություն քարտեզագրական նյութերի ճշտության, մանրամասնության և լիարժեքության վերաբերյալ: Տարբեր մասշտաբներով գեոդեզիական հիմքի վրա սահմանագծային կետերի տեղադրման ճշտությունը: Հատակագծերի և քարտեզների վրա հեռավորությ-

յամբ, գծածրի, մակերեսի, վերագանցման և թեքության տեղադրման ճշտությունը: Մասշտաբների և հորիզոնականների անկման ընտրության սկզբունքները՝ կախված հատակագծի և քարտեզի նշանակությունից: Հոդոգտագործման հատակագծերի ճշման համար կիրառվող հանույթի մեթոդները: Մակերեսների որոշումը վերլուծական եղանակով, հիմնական բանաձևերը, ճշտությունը: Մակերեսների որոշումը գրաֆիկ եղանակով, պալետկայով և նրա ճշտությունը: Մակերեսի որոշման մեխանիկական եղանակ: Պլանիմետր, տեսակները և կառուցվածքը: Պլանիմետրի ստուգումը: Պլանիմետրով մակերեսի որոշումը: Սավիչի եղանակով մակերեսի որոշման ճշտությունը: Ժամանակակից չափիչ տեխնիկայի և համակարգիչների կիրառումը մակերեսների որոշման նպատակով: Տեղամասի նախագծման բովանդակությունը: Տեղամասերի նախագծման վերլուծական եղանակը և նրա ճշտությունը: Տեղամասերի նախագծումը գրաֆիկ եղանակով և նրա ճշտությունը: Տեղամասերի նախագծումը մեխանիկական եղանակով և նրա ճշտությունը: Նախագծման տարբեր եղանակների համակցումը: Նախագծի տեղափոխումը բնության մեջ, բովանդակությունը և եղանակները, աշխատանքների կազմակերպումը: Անկյունաչափական եղանակով նախագծի տեղափոխումը բնության մեջ: Նախագծի տեղափոխումը բնության մեջ մենզոլայով: Նախագծային տեղամասերի սահմանային կետերի և սահմանների ամրացումը: Բնության մեջ տեղամասերի մակերեսների տեղափոխման ճշտությունը: Հակաերոզիոն միջոցառումների և խախտված հողերի վերականգնման նախագծերի գեոդեզիական աշխատանքների բովանդակությունը: Բնակավայրերի հարթագծման գեոդեզիական աշխատանքները: Մեխորատիվ շինարարության նախագծերի կազմման և բնության մեջ տեղափոխման գեոդեզիական աշխատանքների բովանդակությունը:

#### **8. ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐ ԵՎ ՀՈՂԵՐԻ ՍՈՆԻԹՈՐԻՆԳ - 330 ժամ, 11 կրեդիտ**

Հողային կադաստր հասկացությունը, նշանակությունը և խնդիրները: Հողային կադաստրի բաղկացուցիչ մասերը, կադաստրի ձևերը և սկզբունքները: Կադաստրի զարգացման պատմությունը: Հողային ֆոնդը որպես հողային կադաստրի օբյեկտ: Հողային կադաստրի վարման նպատակով ելակետային տեղեկատվության ստացման, մշակման և վերլուծման մեթոդները: Հողային կադաստրի տեղեկատվական և իրավական ապահովումը: Հողային կադաստրը հողային հարաբերությունների կարգավորման և ղեկավարման մեխանիզմ: Հողատիրման հոդոգտագործման գրանցումը, հողագրանցման փաստաթղթերը: Հողերի հաշվառման հասկացությունը և օրինաչափությունները, հողա-հաշվառման միավորները: Հողատեսքերի դասակարգումը, հողերի հաշվառման ձևերը և սկզբունքները, հողա-հաշվառման փաստաթղթերը, բովանդակությունը և ձևերը: Հատակագծա-քարտեզագրական և այլ նյութերի բովանդակությունը հողերի հաշվառման ընթացքում: Հողերի գրանցման և հաշվառման մեքենայացումը: Տվյալների մոդելները և բազաները: Հողային պաշարների ղեկավարման ավտոմատացված համակարգը: Հողերի գնահատման հիմնահարցերը: Հողերի գնահատման հասկացությունը, հողերի բոնիտումը, հողերի բոնիտման նյութերը և փաստաթղթերը, հողերի հատկությունները և ցուցանիշները, հողերի դասակարգման և խմբավորման մեթոդները: Հողերի տնտեսական գնահատման ցուցանիշները: Հողերի գնահատման սանդղակների կազմման սկզբունքները տարբեր հողատեսքերի և կատեգորիաների համար: Ներհամայնքային հողերի գնահատումը: Հողերի արժեքային գնահատումը: Հողերի գնահատման նյութերը և փաստաթղթերը: Հողա-գնահատման աշխատանքների մեքենայացումը: Հողա-գնահատման աշխատանքները արտասահմանում: Հողա-գնահատման տվյալների կիրառման ոլորտները: Համայնքի հողային կադաստրը, մարզի

հողային կադաստրը, հանրապետության հողային կադաստրը: Հողատեղեկատվական համակարգը: Հողային կադաստրը և հողաշինարարությունը: Հողային կադաստրը և հողերի մոնիթորինգը:

**9. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ – 120 ժամ, 6 կրեդիտ**

Գյուղական բնակավայրի շինարարության համար հատկացվող տարածքի ընտրությունը, քաղաքաշինության հիմնական սկզբունքները, գոտիականությունը: Բնակավայրի ճարտարապետա-հատակագծային կառուցվածքը, նրա տարրերը: Հատակագծման ընդհանուր սխեմայի կազմումը: Ծարտարապետա-հատակագծային հորինվածք: Բնակավայրի տրանսպորտա-հատակագծային կազմակերպումը, փողոցների ցանցի համակարգը, բնակավայրի հասարակական կենտրոնը, կառուցվածքը, գործառնությունները: Բնակավայրի ճարտարաբանա-տարածական հորինվածք: Հասարակական, մշակութա-կենցաղային նշանակության շենքերի և շինությունների ու բնակելի շենքերի կազմակերպումը, տեղադրումը բնակավայրում: Գյուղական բնակավայրի արտադրական գոտու կազմը, գյուղ-մեքենաների նորոգման, պահեստների, ջերմոցա-ջերմատնային, անասնապահական, գյուղատնտեսական մթերքների վերամշակման համալիրների նախագծումը: Գյուղական բնակավայրի վերակառուցումը, հատակագծման նախագծման բարեփոխումները: Նախագծի տեխնիկա-տնտեսական գնահատումը:

**10. ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ – 510 ժամ, 17 կրեդիտ**

Հողաշինարարության գիտության սահմանումը, կառուցվածքը, նպատակը և խնդիրները: Հողաշինարարական նախագծումը որպես հողաշինարարության անցկացման մեթոդոլոգիա: Հողաշինարարական նախագծի տեսակները: Հողային և ագրարային հարաբերությունները արդի պայմաններում: Միջտնտեսային հողաշինարարություն: Միջհամայնքային հողաշինարարական նախագծերի կազմումը, նպատակը և խնդիրները: Հանրապետության հողային ֆոնդը ըստ նպատակային նշանակության: Հանրապետության հողային հաշվեկշիռը: Միջտնտեսային հողաշինարարական նախագծերի բովանդակությունը, կազմը և կառուցվածքը՝ կապված ջրամբարների շինարարության արդյունքում նրանց ազդեցության գոտում հայտնված հողօգտագործողների վերակազմավորման հետ: Միջտնտեսային հողաշինարարական նախագծերով տնտեսությունների սահմանների ճշգրտման, վերականգնման և անցկացման գործողությունների հաջորդականությունը: Խախտված հողերի վերականգնման նախագծի կազմումը, հողալվացման հողատարածքների խոշորացման և արդյունավետ հողօգտագործման կազմակերպման սկզբունքները: Հողօգտագործման թերությունները և նրանց վերացման ուղիները: Ներհամայնքային հողաշինարարական նախագծերի կազմման նպատակը, խնդիրները: Ներհամայնքային ճանապարհային ցանցի տեղաբաշխումը և նախագծումը, ճանապարհի ծանրաբեռնվածությունը, ծածկույթը, լայնական պարամետրերի սահմանումը, երկայնական պրոֆիլների կազմումը, հողային աշխատանքների ծավալների հաշվարկը: Ծարտարագիտական, մեխորատիվ և ջրատնտեսական տարրեր նշանակության կառուցվածքների տեղաբաշխումը: Ոռոգման ցանցի նախագծումը և նրա լծորդումը հողօգտագործման պարամետրերի հետ: Բանվորական նախագծեր: ՀՀ հողային ֆոնդի վերլուծությունը: Վարելահողերի հողաշինարարական կազմակերպումը, ցանքաշրջանառության սխեմաների կազմումը: Դաշտապաշտպան անտառաշերտերը և նրանց տեղաբաշխումը: Կուլտուր-տեխնիկական աշխատանքների բովանդակությունը: Քարքարոտ հողերի յուրացում, քարքարոտ հողերի յուրացման դիֆերենցիալ տեխնոլոգիան: Բազմամյա տնկարկների տարածքի հողաշինարարական կազմակերպումը: Բնական կերհանդակների տարածքի հողաշինարարական կազ-

մակերպումը, արոտավայրերի մակերեսային և արմատական բարելավում, մշակովի արոտային տարածքի կազմակերպումը: Արոտավայրերի ջրարբիացում: Հակաէրոզիոն միջոցառումների դասակարգումը, թեք լանջերի դարավանդումը, հաշվարկը և նախագծումը հատակագծում: Հակաձորակային միջոցառումներ: Հողերի հարթագծումը թեք կամ հորիզոնական հարթության տակ: Ոռոգելի հողերի հարթագծում: Նախագծի տեղափոխումը բնության մեջ: Հողաշինարարական նախագծերի տնտեսական, սոցիալական և էկոլոգիական արդյունավետության հիմնավորումը:

**11. ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ – 270 ժամ, 9 կրեդիտ**

Առարկայի ուսումնասիրման մեթոդը, խնդիրները և բովանդակությունը: Հողային ռեսուրսների օգտագործման կանխատեսումների մեթոդիկայի տեսական հիմունքները: Հողային ռեսուրսների ժամանակակից օգտագործման վերլուծությունը, ուսումնասիրվող երևույթների միտումների ու զարգացման օրինաչափությունների սահմանումը: Հողային կանխատեսումների փուլերը և նրանց կատարման փուլերը: Կանխատեսումների հավաստիությունը, արժանահավատության գնահատման աստիճանը: Հանրապետության հողային ռեսուրսների օգտագործման գլխավոր սխեման: Մարզի հողային ռեսուրսների օգտագործման կանխատեսումների բովանդակությունը: Շրջանային սխեմաների խնդիրները: Հողային ռեսուրսների կանխատեսումների արդյունքների տնտեսական գնահատման մեթոդները: Նախագիծ, նախագծման փուլերը, տեխնիկա-տնտեսական հիմնավորումը, սխեման, տեխնիկական նախագիծ, աշխատանքային գծագրերի փուլը, նախագծի կիրառումը բնության մեջ:

**12. ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ՀՈՂԱԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ - 90 ժամ, 3 կրեդիտ**

Ներածություն: Հողաշինարարական և հողակադաստրային աշխատանքների առանձնահատկությունները: Հողաշինարարության, կուլտուր-տեխնիկական աշխատանքների քարքարոտ հողերի իրացման նախագծումը և կատարումը: Հողային աշխատանքներ, բնահողի շինարարական հատկությունները, դասակարգումը: Փխրունացման գործակից, մնացորդային փխրունացում: Հողային կադաստրի կազմակերպումը և վարումը: Հողօգտագործման բնութագրերը գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններում: Հողային աշխատանքների կատարման միջոցները անընդհատ և ցիկլային գործողության հողային մեքենաներ: Միաշերտի էքսկավատորներ, դասակարգումը և աշխատանքների կազմակերպումը: Հողօգտագործման իրավունքի պետական ակտ, դրա նշանակությունը և կազմելու կարգը: Հատուկ տիպի մեխորատիվ մեքենաներ, նրանց աշխատանքի կազմակերպումը: Պայթեցման աշխատանքների կազմակերպումը և կիրառումը հողաշինարարական աշխատանքներում: Հողերի հաշվառումը և նրանց մեխորատիվ վիճակը: Դաշտերի հարթեցման աշխատանքներ: Ոռոգելի հողերի գույքագրման աշխատանքների նախապատրաստումը, կազմակերպումն ու անցկացումը: Հողաշինարարության հետախուզման աշխատանքները, նրանց կատարումը: Նախագծման փուլերը: ՀՀ հողային օրենսգիրքը: Հողերի չափաբերման կազմակերպումն ու կատարումը: Քարտեզագրական և հատակագծային նյութերը և նրանց օգտագործումը հողային կադաստրի վարման աշխատանքներում: Պետական վերահսկողության դերը հողային կադաստրի վարման գործում, անօգտագործելի հողեր, պահուստային ֆոնդի ձևավորումը, նրանց օգտագործման կարգը և այդ գործում հողաշինարարության դերը: Շինարարության նախահաշվային արժեքի որոշումը, ընդհանուր նախահաշվային-ֆինանսական հաշվարկ: Նորմատիվային աղբյուրներ, շինարարության նորմաներ և կանոններ: Շինարարության

օրացուցային պլան: Շինարարության գլխավոր հատակագիծ: Նախապատրաստական աշխատանքներ և օժանդակ օբյեկտներ:

**13. ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՍՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԿԱԴԱՍՏՐ – 330 ժամ, 11 կրեդիտ**

Հասկացություն բնական ռեսուրսների կադաստրի մասին, նշանակությունը, խնդիրները: Կադաստրի բաղկացուցիչ մասերը, տեսակները, սկզբունքները: Կադաստրի զարգացման պատմությունը: Կադաստրի ինֆորմացիայի ստացման մեթոդները, մշակումը և վերլուծությունը: Ջրային, անտառային ռեսուրսների, մթնոլորտի, ֆլորայի և ֆաունայի, և այլնի կադաստր: Կադաստրային տվյալների մշակման ավտոմատացում: Բնական ռեսուրսների մոնիթորինգի կառուցվածքը, բովանդակությունը: Բնական ռեսուրսների մոնիթորինգի վերահսկողական ցուցանիշների համակարգը: Բնական ռեսուրսների բազային և օպերատիվ մոնիթորինգ: Բնական ռեսուրսների մոնիթորինգի դիստանցիոն և վերգետնյա միջոցները: Բնական ռեսուրսների մոնիթորինգի կառուցվածքի կազմակերպումը: Հողային ռեսուրսների էկոլոգիական փոփոխության մոնիթորինգների ինֆորմացիայի ապահովումը: Բացասական գործընթացների ազդեցության չեզոքացման եղանակները:

**14. ՀՈՂԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ – 150 ժամ, 5 կրեդիտ**

Հողային իրավունքը՝ որպես իրավունքի ճյուղ: Հողային իրավունքի ծագման և զարգացման համառոտ պատմությունը: ՀՀ հողային օրենսդրությունը: ՀՀ հողային ֆոնդը: Գյուղատնտեսական նշանակության հողերի հասկացությունը: Բնակավայրերի, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների, հատուկ պահպանվող տարածքների, հատուկ նշանակության, անտառային, ջրային և պահուստային հողեր: Հողային պաշարների կառավարումը: Հողերի պահպանությունը: Վերահսկողությունը հողային օրենսդրության կիրառման նկատմամբ: Հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքները: Հողամասի սերվիտուտը: Հողամասերի սեփականության իրավունքը: Հողային վեճերի քննարկման կարգը: Պատասխանատվությունը ՀՀ հողային օրենսդրության խախտման համար:

**15. ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱ - 90 ժամ, 3 կրեդիտ**

Ագրարային տնտեսագիտության հիմունքները: Հողը որպես գյուղատնտեսական արտադրության գլխավոր միջոց և նրա առանձնահատկությունների տնտեսագիտական մեկնաբանությունը: Հողը արտադրական ֆունկցիայում: Հողաշինարարական, հողապահպանական միջոցառումների տնտեսական արդյունավետության որոշումը, բիզնես-ծրագրերի տնտեսական հիմնավորումը: ՀՀ հողային ֆոնդը: Կազմը, կառուցվածքը: Հողատեսքեր: Գյուղատնտեսական հողատեսքեր: Հողատեսքերի փոխակերպման տնտեսական գնահատումը: ՀՀ գյուղատնտեսական հողատեսքերի 1940-2004թթ. կառուցվածքային տեղաշարժերի տնտեսական գնահատականը: Հողային մոնիթորինգը, բաղկացուցիչ մասերը, իրականացման կառույցները և վիճակը: Հողատեսքերի կառուցվածքային և տնտեսական համահարթում: Մեթոդիկան: Չափակցելի և պայմանական վարելահող: Կադաստրային հեկտար: Ցանքատարածությունների ընդհանուր և տարածքային կառուցվածքային տեղաշարժերը, սպառնացող վտանգի վերացման ուղիները: ՀՀ հողային ֆոնդը ըստ հողօգտագործողների: Տարածքային հողապահովվածությունը: Սեփականաշնորհման հարուցած խնդիրների լուծման ուղիները: Հողային կադաստր: Էությունը, նշանակությունը, վիճակը ՀՀ-ում: Կադաստրի բաղկացուցիչ մասերը: Կադաստրի կազմելու, հաստատելու կարգը, օգտագործման բնագավառները: Հողի հարկը և կադաստրը: Ինչու է դժգոհ գյուղացիական տնտեսությունը: Հողի տնտեսական գնահատումը: Մեթոդիկայի թերությունները: Տնտեսական գնահատման սանդղակները, տարած-

քային ցուցանիշները: Հոդօգտագործման տնտեսական արդյունավետությունը, ցուցանիշները, հաշվարկման մեթոդիկական, մակարդակը, դինամիկական, տարածքային առանձնահատկությունները: Վարելահողերի և բազմամյա տնկարկների, բնական կերհանդակների տարածությունների օգտագործման մակարդակը և դինամիկական: Ոռոգելի և ոռոգված ջրարբիացված հողեր, կորուստների գինը: Հողաշինարարական և հողօգտագործման մեջ ներառվող ռեսուրսների (կապիտալի, աշխատանքի) և ամենամյա արտադրական ու աշխատանքային ծախսումների տնտեսական արդյունավետության մեթոդիկական, ցուցանիշները: Բիզնես-ծրագրերի տնտեսական հիմնավորում: Հոդօգտագործման տնտեսական արդյունավետության բարձրացման տեխնիկական-տեխնոլոգիական, քաղաքական, սոցիալ-բարոյական ասպեկտները:

### **16. Անշարժ գույքի գնահատում և փորձաքննություն -90 ժամ, 3 կրեդիտ**

Անշարժ գույքի փորձաքննություն և գնահատում առարկայի նպատակը, խնդիրները և սկզբունքները: Անշարժ գույքի շուկայական արժեք և գին: Շուկայական արժեքից տարբերվող արժեքի տեսակները: Արժեքի վրա ազդող գործոնները: Դրամական հոսքերի դիսկոնտավորում: Անշարժ գույքի գնահատման և փորձաքննության ժամանակ անշարժ գույքի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումը, մշակումը և վերլուծությունը: Անշարժ գույքի շուկայական արժեքի որոշման մեթոդները: Ծախսային մեթոդով անշարժ գույքի շուկայական արժեքի որոշումը: Անշարժ գույքի ֆիզիկական, ֆունկցիոնալ և տնտեսական մաշվածության որոշումը: Եկամտային մեթոդով անշարժ գույքի շուկայական արժեքի որոշումը: Կապիտալավերածման գործակից: Համեմատական մեթոդով անշարժ գույքի շուկայական արժեքի որոշումը: Հողամասերի շուկայական արժեքի որոշման առանձնահատկությունները: Անշարժ գույքի գնահատումը շուկայի ռիսկայնության գործոնի հաշվառմամբ: Ներդրումային նախագծերի գնահատումը: Գնահատման արդյունքների ձևակերպման նկատմամբ պահանջները: Գնահատման արդյունքների համաձայնեցումը և հաշվետվության կազմումը:

### **17. Գյուղ. արտադրության և հողշին կառավարում -90 ժամ, 3 կրեդիտ**

1. Հողը որպես սփականության օբյեկտ,
2. հողօգտագործման տնտեսական արդյունավետությունը,
3. հողի սեփականության տնօրինումը, օգտագործումը,
4. հողերի հաշվառման, օգտագործման պետական վերահսկողություն,
5. հողային տարածքի կազմակերպմանը ներկայացվող պահանջները,
6. հողատեսքերի փոխակերպման և վերակուլտիվացիայի տնտեսական արդյունավետությունը,
7. գյուղատնտեսական հողատեսքերի և ցանքաշրջանառության տարածքի կազմակերպումը,
8. մեքենաների համակարգին և դրա մեջ մտնող առանձին մեքենաներին ներկայացվող կազմակերպատնտեսական պահանջները, մեքենաների պահանջարկի հաշվարկման մեթոդական,
9. սպասարկող արտադրության առանձին օղակների կազմակերպումը,
10. աշխատանքային կոլեկտիվների կազմակերպման և նրանց նյութական խրախուսման կատարելագործման ուղիները,
11. տնտեսության վարման համակարգը և մասնագիտացման, ճյուղերի զուգակցման, համակենտրոնացման հիմնախնդիրները, շուկայական տնտեսության պայմաններում,
12. նյութատեխնիկական ապահովման, մատակարարման, գյուղ. մթերքների վերամշակման, պահպանման հանրապետական, մարզային ենթակառուցվածքները,

13. վարկային և ապահովագրական համակարգերի կատարելագործման արդի գործառնությունները,

14. ագրարային քաղաքականությունը, ներդրումային և բիզնես ծրագրերի վարկավորման բնագավառում:

**18. Ագրոպարենային համակարգի կազմակերպությունների կառավարում-60 ժամ, 2 կրեդիտ**

Կառավարման տեսության հիմնական կատեգորիաները: Գյուղատնտեսական մթերքներ արտադրող կազմակերպությունների տեսակները: Կազմակերպությունների արտաքին և ներքին միջավայրերի բնութագրումը:

Կառավարման գործընթացը և գործառնությունները: Կառավարման մեթոդները և դրանց կիրառումը ՀՀ ագրոպարենային համակարգի կազմակերպություններում:

Կոմունիկացիաների նշանակությունը կառավարման գործընթացում: Կառավարչական որոշումները և դրանց ընդունման գործընթացը: Հանրային կառավարման էությունը, գործառնությունները և կազմակերպումը: Խմբերի կառավարումը: Իշխանությունը և առաջնորդումը: Ղեկավարման ոճերը: Կոնֆլիկտների, փոփոխությունների և սթրեսի կառավարումը:

Արտադրության կառավարումը և օպրատիվ կառավարման էությունն ու խնդիրները: Արտադրության կառավարման առանձնահատկությունները ՀՀ ագրոպարենային համակարգի կազմակերպություններում: Կառավարման արդյունավետությունը և դրա բարձրացման հիմնական ուղիները: Անձնկազմի հասկացությունը, կառուցվածքը և կառավարման փուլերը:

**19. Գեոդեզիայի հատուկ դասընթաց-240 ժամ, 8 կրեդիտ**

Գեոդեզիական պլանային հիմքի ցանցերի ստեղծումը խոշոր օբյեկտների՝ մելիորատիվ շինարարության, հիդրոգատումների, միջտնտեսական և ներտնտեսական հողաշինարարություն, կադաստրային հողագիտական միջոցառումների համար: Տեղագրական հանույթներ, հանույթների տեսակները և դրանց առանձնահատկությունները, ճշտությունները: Ժամանակակից մեթոդներով կատարվող հանույթներ: Էլեկտրոտախետմետր, ժամանակակից սարքերով կատարվող հանույթների նպատակահարմարությունը հողային կադաստրի բնագավառում: Մակերեսների հաշվարկը, դրանց եղանակները և ժամանակակից մեթոդները: Ինժեներա-գեոդեզիական աշխատանքներ: Հաշվարկային և հավասարակշռման եղանակներն ու մեթոդները: Ինժեներա-գեոդեզիական աշխատանքի ժամանակ հանդիպող բարդ կապման խնդիրների լուծումներ (հատումներով, Պոտենոտի խնդիր, հակադարձ հատումներ և այլն): Ինժեներա-գեոդեզիական աշխատանքների պլանային հիմքի և բարձրությունների հաշվարկված ու ամփոփված փաթեթների ձևակերպումները ու հանձնումը պահպանման: Գաղափար ժամանակակից մեթոդներով թվային տեղագրական բանկի մասին, դրանցից օգտվելու ձևերի մասին:

**Բուհական բաղադրիչ**

**Ուսանողի կողմից ընտրովի դասընթացներ**

Ֆակուլտատիվ դասընթացի կրթաբլոկ

Տեսական ուսուցման ընդհանուր ժամաբլոկ 150 շաբաթ



4.1. Առկա ձևով ուսուցման դեպքում լսարանային պարապմունքներին պետք է տրամադրվի յուրաքանչյուր ուսումնական դասընթացին հատկացվող ժամանակի 50%-ից ոչ պակասը, իսկ հեռակա ձևով ուսուցման դեպքում՝ 10%-ից ոչ պակաս:

**5. Հողաշինարարություն և հողային կադաստր ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ**  
դասիչ, անվանում

**Տեխնիկայի և տեխնոլոգիայի ԲԱԿԱԼԱՎՐԻ**  
որակավորման աստիճան

**ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ  
ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

5.1 Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր պատրաստման հիմնական կրթական  
որակավորման աստիճան

ծրագրի յուրացման ժամկետը, ներառյալ ուսանողի հետազոտական աշխատանքը, առկա ուսուցման ձևով 242 շաբաթ է, որից.

- տեսական ուսուցումը՝ 150 շաբաթ
- քննաշրջանները՝ 27 շաբաթ
- պրակտիկաները՝ 21 շաբաթ (ուս. պրակտիկա 8 շաբաթ, արտադրական՝ 8, նախադիպլոմային պրակտիկա 5 շաբաթ),
- եզրափակիչ պետական որակավորումը, ներառյալ ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքի պատրաստումը և պաշտպանությունը՝ 10 շաբաթ,
- արձակուրդները՝ 34 շաբաթ:

Դիպլոմային աշխատանքի կատարման ժամանակացույցը, ընթացիկ վերահսկման և ատեստավորման ձևը, պաշտպանության թույլատրման կարգը սահմանում է բուհը (ֆակուլտետը), որը հաստատում է բուհի գիտական խորհուրդը:

5.2 Միջնակարգ (յրիվ) ընդհանուր կրթություն ունեցող անձանց համար

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական  
որակավորման աստիճան

կրթական ծրագրերի յուրացման ժամկետները հեռակա ուսուցման ձևով երկարացվում է մինչև 1 տարի՝ սույն պատական կրթական չափորոշիչի թ. 1.2-ով սահմանված ժամկետի նկատմամբ:

5.3 Ուսանողի ուսումնական բեռնվածքի առավելագույն ծավալը սահմանվում է շաբաթական 45 ժամ՝ ներառյալ լսարանային և արտալսարանային (ինքնուրույն) աշխատանքները:

5.4 Առկա ուսուցման ձևով սովորող ուսանողի լսարանային պարապմունքների ծավալը չպետք է գերազանցի շաբաթական 30 ժամ: Նշված ծավալում չեն ընդգրկվում ֆիզիկական կուլտուրայի և ֆակուլտատիվ դասընթացների դասաժամերը: Ուսումնական տարվա տեսական ուսուցման տևողությունը 34 շաբաթ է:

5.5 Հեռակա ուսուցման ձևով սովորող ուսանողի համար պետք է ապահովվի տարեկան 160 ժամից ոչ պակաս ծավալով դասախոսների հետ պարապմունքներ անցկացնելը:

5.6 ուսումնական տարվա արձակուրդները պետք է 7-10 շաբաթ լինեն, այդ թվում՝ 2 շաբաթից ոչ պակաս՝ ձմեռային քննաշրջանից հետո:

**6. 310901 Հողաշինարարություն և հողային կադաստր ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ**  
դասիչ, անվանում

**Տեխնիկայի և տեխնոլոգիայի ԲԱԿԱԼԱՎՐԻ**  
որակավորման աստիճան

**ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ  
ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

**6.1. Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական**  
որակավորման աստիճան

կրթական ծրագրի մշակմանը ներկայացվող պահանջները.

*6.1.1. Սույն պետական կրթական չափորոշիչի հիման վրա բուհն ինքնուրույն է մշակում և հաստատում Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման*  
որակավորման աստիճան

*կրթական ծրագիրը:*

Ուսանողի կողմից ընտրովի դասընթացների ուսումնառությունը պարտադիր է, իսկ նրանց ցանկը երաշխավորական բնույթ է կրում, որը կարող է փոփոխել կամ լրացնել բուհը:

Ուսումնական դասընթացի բաղադրիչների տեսակները (դասախոսություն, գործնական, լաբորատոր, սեմինար պարապմունքներ, տնային և կուրսային աշխատանքների խորհրդատվություն և այլն) և ծավալները՝ դասընթացին հատկացված դասաժամերի շրջանակում սահմանում է բուհը: Ուսուցման ողջ շրջանում ուսումնական ժամաքանակի ընդհանուր հաշվեկշռում ակտիվ մեթոդներով ուսանողի տեսական ուսուցումը չպետք է ցածր լինի 25%-ից:

Ուսանողի գիտելիքի ստուգման և գնահատման համակարգի տեսակն ընտրում է բուհը: Տվյալ դասընթացից ուսանողի գիտելիքների եզրափակիչ գնահատականը չպետք է հիմնավորվի միայն վերջին քննության (ստուգարքի) արդյունքով, այն պետք է հաշվի առնի ուսանողի ակտիվությունը դասընթացից և ընթացիկ առաջադիմությունը կիսամյակի (ների) ընթացքում: Եզրափակիչ գնահատման դեպքում գնահատականի 40%-ը ձևավորվում է ընթացիկ առաջադիմությանը և միջանկյալ ստուգումներով, իսկ 60%-ը՝ եզրափակիչ քննության (ստուգարքի) արդյունքով:

Քննությունների անցկացման հիմնական ձևը գրավոր կամ գրավոր-բանավորն է: Բացառության կարգով բուհը կարող է սահմանել բանավոր քննություններ, բայց դրանք չպետք է գերազանցեն քննությունների ընդհանուր քանակի 25%-ը: Բուհի իրավունքն է ուսումնական դասընթացների եզրափակիչ ստուգման եղանակի (ստուգարք կամ քննություն) ընտրությունը և ձևի սահմանումը:

Ուսանողների գիտելիքների ընթացիկ գնահատման համակարգում բուհն օգտագործում է իրեն նպատակահարմար գնահատման սանդղակ: Միջազգային մասնագիտական կրթական համակարգին ինտեգրվելու և ուսանողների ակադեմիական շարժունակությունն ապահովելու նպատակով ուսումնական գործընթացում գերադասելի է գիտելիքների ստացման և գնահատման վարկային (կրեդիտային) համակարգի ներդրումը և օգտագործումը: Դասընթացից եզրափակիչ գնահատական նշանակելու դեպքում անհրաժեշտ է անցնել գիտելիքների գնահատման ավանդական համակարգին («գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար», «ստուգված», «չստուգված»):

Կուրսային աշխատանքը դիտարկվում է որպես դասընթացի ուսումնական բաղադրիչ և իրականացվում է այդ դասընթացին հատկացրած դասաժամերի հաշվին: Հիմնական մասնագիտական դասընթացներից կուրսային աշխատանքի կատարելը պարտադիր է, բայց ուսուցման ողջ շրջանում դրանք չպետք է գերազանցեն 5-ը:

Մասնագիտության ուսումնական պլանով (հավելված 2) նախատեսված բոլոր ուսումնական դասընթացների, կուրսային աշխատանքների և պրակտիկաների համար պարտադիր է եզրափակիչ գնահատականի նշանակումը:

Մասնագիտական դասընթացների կրթաբլոկը ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթաբլոկի տրամաբանված հաջորդականությունն է, որը ըստ ընտրած մասնագիտությամբ նախատեսված գործունեության բնագավառներում նպաստում է ուսանողի խոր մասնագիտական գիտելիքների և ունակությունների ձեռքբերմանը: Այն մասնագիտությունների գծով, որոնց անվանման մեջ առկա է (ըստ ճյուղերի) արտահայտությունը ընտրած բնագավառի համար շրջանավարտի պատրաստման առանձնահատկությունները առաջին հերթին հաշվի են առնվում մասնագիտացման դասընթացների միջոցով: Բուհը պետական կրթական չափորոշիչի հավելված 1-ում տրված ցանկից ինքնուրույն է ընտրում իրեն համապատասխանող մասնագիտացումը և իրավունք ունի փոփոխելու կամ լրացնելու մասնագիտացման դասընթացների ցանկը, կամ էլ ՀՀ ԿԳՆ մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչը մշակող գիտամեթոդական հանձնաժողովի հետ համաձայնեցրած՝ ձևավորելու նոր մասնագիտացում:

Ֆակուլտատիվ դասընթացների կրթաբլոկի ցանկը նույնպես երաշխավորական բնույթ է կրում և ուսանողի համար պարտադիր չէ, իսկ դրանց հաճախելու դեպքում կրթաբլոկին հատկացրած ժամաքանակների 30%-ին վերաբերվող դասընթացներից պարտադիր է ուսանողների գիտելիքների ստուգումը և գնահատումը:

*6.1.2 Մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու դեպքում բուհն իրավասու է՝*

- 5%-ի սահմաններում փոփոխել դասընթացների կրթաբլոկներին հատկացրած ժամաքանակները, իսկ առանձին դասընթացներին՝ մինչև 10%-ի սահմաններում,
- ձևավորել հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացների կրթաբլոկ, որի հանրապետական բաղադրիչում նշված 12-ից (թ. 4 բաժին) պարտադիր է հետևյալ դասընթացների առկայությունը՝

«Ֆիզիկական կուլտուրա»,

«Հայ ժողովրդի պատմություն»,

«Հայոց լեզու և գրականություն»,

«Ռուսաց լեզու և գրականություն»,

«Օտար լեզու» ,

«Փիլիսոփայություն»:

Մնացած դասընթացները կարող են ընդգրկվել ըստ բուհի հայեցողության: Այս դեպքում հնարավոր է նրանց միջդասընթացային միավորումը՝ բովանդակության պարտադիր նվազագույնի պահպանմամբ:

Եթե դասընթացը ընդհանուր մասնագիտական կամ մասնագիտացման դասընթացների կրթաբլոկի մի մասն է կազմում, դրա համար հատկացված ժամերը վերաբաշխվում են ՀՍ դասընթացների վրա:

Ֆիզիկական կուլտուրայի պարապմունքները հեռակա և դրսեկության ձևերով ուսումնառող ուսանողների համար կարող են իրականացվել նրանց ցանկությամբ,

- ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՀՍ) դասընթացների դասավանդումն իրականացնել հեղինակային դասախոսությունների, անհատական և կոլեկտիվ գործնական պարապմունքների, առաջադրանքների և սեմինարների ձևով՝ բուհի մշակած ծրագրերով, հաշվի առնելով բուհի մասնագիտական առանձնահատկությունները, դասախոսների հետազոտական ուղղվածությունը և հակումները, որոնք կապահովեն կրթաբլոկի դասընթացների թեմատիկայի լուսաբանումը՝ ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը համապատասխան:
- սահմանել ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՀՍ), ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական (ԸԲ) կրթաբլոկներում ընդգրկված դասընթացների առանձին բաժինների դասավանդման անհրաժեշտ խորությունը՝ կրթաբլոկների դասընթացների ուղղվածությանը համապատասխան և մասնագիտության առանձնահատկությունների հաշվառմամբ: ԸՄ կրթաբլոկում պարտադիր է «Քաղ. պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահար-

ցեր» առարկայի դասավանդումը: Բուհական բաղադրիչներին առանձնացված ժամաքանակները բուհի հայեցողությամբ կարող են օգտագործվել հանրապետական բաղադրիչներում ընդգրկված դասընթացների ավելի խորը դասավանդման համար:

- իրականացնել 310901 Հողաշինարարություն և հողային կադաստր

դասիչ, անվանում

մասնագիտությամբ Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի

որակավորման աստիճան

պատրաստման հիմնական կրթական ծրագիրը կրճատված ժամկետով՝ համապատասխան ուղղվածության միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող ուսանողների համար: Ուսուցման ժամկետների կրճատումը կատարվում է մասնագիտական կրթության նախորդ աստիճանում ուսանողների ձեռք բերած գիտելիքների, ունակությունների և հմտությունների հիման վրա: Այդ դեպքում ուսուցման տևողությունը 2 (երկու) տարուց պակաս չպետք է լինի: Կրճատված ժամկետով ուսուցումը թույլ է տրվում նաև այն անձանց, որոնց կրթական մակարդակը և բացառիկ ընդունակությունները բավարար հիմք են նման ուսուցում իրականացնելու համար:

- առանձին դեպքերում, մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները մշակող ԿԳՆ գիտամեթոդական հանձնաժողովի հետ համաձայնեցված՝ 310901 Հողաշինարարություն և հողային կադաստր

դասիչ, անվանում

մասնագիտության համար բուհերն իրավունք ունեն մինչև 20%-ի սահմանում փոխել ընդհանուր մասնագիտական դասընթացների (ԸՄԴ) կրթաբլոկի ժամաքանակը, իսկ առանձին դասընթացները՝ մինչև 40%-ի սահմաններում:

## 6.2 Ուսումնական գործընթացի կադրային ապահովման պահանջները.

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր պատրաստման հիմնական կրթական

որակավորման աստիճան

ծրագրերի իրականացումը պետք է ապահովվի գիտամանկավարժական կադրերով, որոնք որպես կանոն, ունեն դասընթացների դասավանդման ուղղվածությանը համապատասխանող բազային կրթություն (առնվազն դիպլոմավորված մասնագետ կամ մագիստրոս) և հետևողականորեն զբաղվում են հետազոտական և գիտամեթոդական գործունեությամբ: Հատուկ մասնագիտացնող դասընթացներ դասավանդող դասախոսները, որպես կանոն, պետք է ունենան գիտական աստիճան (գիտական կոչում և այլն) և/կամ համապատասխան գործունեության ոլորտում աշխատանքի փորձ:

Գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսները պետք է կազմեն պրոֆեսորադասախոսական կազմի 50%-իս ոչ պակասը:

Հիմնական հաստիքային դասախոսները և 0.25 հաստիքից բարձր ձևակերպված համատեղողները նույնպես պետք է կազմեն ընդհանուրի 50%-ից ոչ պակասը:

## 6.3 Ուսումնական գործընթացի ուսումնամեթոդական ապահովման պահանջները

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր պատրաստման հիմնական կրթական

որակավորման աստիճան

ծրագրերի իրականացումը պետք է ներառի ուսանողների կողմից մասնագիտական դասընթացների լաբորատոր, գործնական (սեմինար) աշխատանքների կատարում:

### Աշխատանքների գանկը

- հողակադաստրային աշխատանքների գեոդեզիական ապահովումը
- հողաշինարարական նախագծերի տեղափոխումը բնության մեջ,
- գյուղական բնակավայրերի հատակագծումը,
- տեղական նշանակության ճանապարհների նախագծումը,
- քարքարոտ հողերի յուրացման հողաշինարարական աշխատանքների նախագծում,
- միջտնտեսային և ներտնտեսային հողաշինարարական աշխատանքների նախագծում,

- հակաէրոզիոն միջոցառումների նախագծային աշխատանքներ,
- մշակովի արտոների տարածքների հողաշինարարական կազմակերպում:

Պարտադիր պահանջ է նաև անհրաժեշտ ինֆորմացիոն բազայի ստեղծումը, որն ապահովում է բարձրորակ մասնագետի պատրաստումը և ուսանողի մուտքը տարբեր ինֆորմացիոն աղբյուրներ, ներառյալ internet-ը:

**Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր պատրաստման հիմնական կրթական որակավորման աստիճան**

Ծրագրերի իրականացումը պետք է ապահովվի յուրաքանչյուր ուսանողի մուտքով դեպի գրադարանային ֆոնդեր և տվյալների բազաներ, որոնք ըստ բովանդակության համապատասխանում են հիմնական կրթական ծրագրով նախատեսված դասընթացների լրիվ ցանկին, նույն դասընթացների բաղադրիչներին (դասախոսություններ, գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքներ, կուրսային և դիպլոմային աշխատանքների խորհրդատվություն, պրակտիկաների ծրագրեր) նվիրված մեթոդական ձեռնարկների և ցուցադրումների առկայությամբ, ինչպես նաև տեսալսողական, բազմամիջավայրային նյութերով և ցուցադրական ձեռնարկներով:

Բուհի գրադարանը պետք է հագեցված լինի մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների ուսումնամեթոդական համալիրներով, մասնագիտության նորմատիվ-իրավական ակտերով, տեղեկատու գրականությամբ և չափորոշիչներով:

**6.4. Ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովման պահանջները.**

**Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր պատրաստման հիմնական կրթական որակավորման աստիճան**

Ծրագրի իրականացնող բուհը պետք է ունենա նյութատեխնիկական բազա, որը համապատասխանում է գործող սանիտարահիգիենիկ նորմերին և հակահրդեհային կանոններին, ապահովում է օրինակելի ուսումնական պլաններով նախատեսված լաբորատոր, սեմինար, գործնական պարապմունքների և միջդասընթացային պատրաստման բոլոր ձևերի և ուսանողների հետազոտական աշխատանքների կատարումը:

**6.5. Պրակտիկաների կազմակերպման պահանջները**

Ուսուցման ընթացքում առանձին մասնագիտական դասընթացների և ընտրած մասնագիտացման գծով գործնական ունակությունների, ապագա աշխատավայրում հմտություններ և փորձառումներ ձեռք բերելու նպատակով բնագավառի կազմակերպահրավական տարբեր կազմակերպություններում, հիմնարկներում և հաստատություններում (Անշարժ գույքի կադաստրի ՊԿ, «Հողշինմոնիթորինգ» ՊՈԱԿ, «Գեոդեզիայի և քարտեզագրման կենտրոն» ՊՈԱԿ, Անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանումներ, Մարզպետարանների հողշին վարչություններ) կազմակերպվում են ուսանողների ուսումնական և արտադրական պրակտիկաներ: Ուսանողի նախադիպլոմային պրակտիկան մասնագիտության ուսումնական պլանի պարտադիր բաղադրիչն է, որի կազմակերպման և իրականացման պատասխանատուն բուհն է: Նախադիպլոմային պրակտիկան կազմակերպվում է այն հաշվով, որպեսզի շրջանավարտը կարողանա այդ ընթացքում ստացած փորձառությունը օգտագործել իր դիպլոմային աշխատանքը ձևավորելիս: Եթե շրջանավարտը ուսուցումը համատեղում է աշխատանքի հետ, բուհն իրավունք ունի թույլատրել աշխատավայրում պրակտիկայի անցկացումը, եթե շրջանավարտի աշխատանքի բնույթը համապատասխանում է բուհում ուսումնառած մասնագիտությանը:

Պրակտիկան կարող է կազմակերպվել նաև որոշակի կազմակերպություններում՝ նախապես կազմված անհատական ծրագրերով, եթե շրջանավարտը նույն կազմակերպությունում պաշտոն է զբաղեցնում:

Արտադրական պրակտիկայի տեղերի բացակայության դեպքում բուհը (ֆակուլտետը) այն կազմակերպում է սեփական նյութատեխնիկական բազայի վրա, եթե այն հագեցված է ժամանակակից սարքավորմամբ և ծրագրային միջոցներով:

## ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱԿԱՐԴԱ- ԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

7.1. Շրջանավարտը պետք է կարողանա լուծել սույն պետական կրթական չափորոշիչի  
թ. 1.2 կետում նշված որակավորամը համապատասխանող խնդիրները:

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրը պետք է.

որակավորման աստիճան

*ա/ հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտելիքների բնագավառում՝*

- իմանա ՀՀ Սահմանադրության և իր բնագավառի օրենքները,
- ազատ տիրապետի մասնագիտական հայոց լեզվին (գրավոր և բանավոր) և հա-  
ղորդակցվի երկու օտար լեզուներով,
- ունենա պատկերացում առողջ կենսակերպի մասին, տիրապետի ֆիզիկական  
կատարելագործման ունակություններին և հմտություններին,
- իմանա հայ ժողովրդի պատմությունը և արդի քաղաքագիտական զարգացումնե-  
րը,
- ծանոթ լինի համաշխարհային մշակույթին, տիրապետի վարվելաձևի կուլտուրա-  
յին, իմանա էթիկական և իրավական նորմերը, որոնք կարգավորում են մարդու,  
հասարակության և շրջակա միջավայրի հարաբերությունները,
- գիտենա հոգեբանության և մանկավարժության տարրերը,
- ծանոթ լինի ժամանակակից փիլիսոփայական ուղղություններին, գիտենա կե-  
ցության մասին գիտության հիմնադրույթները, նյութականի և վերացականի  
հասկացությունները, մատերիայի կազմակերպման ձևերը, հետևի սոցիալական  
գլոբալ զարգացումներին,
- գիտենա տնտեսագիտության տեսության հիմնադրույթները, մակրո և միկրոտն-  
տեսության օրենքները, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկու-  
թյունները:

*բ/ բնագիտության և մաթեմատիկայի բնագավառում՝*

- ծանոթ լինի ժամանակակից բնագիտություն սկզբունքներին և հայեցակարգե-  
րին, բնապահպանական գլոբալ և տարածքային հիմնախնդիրներին,
- տիրապետի մաթեմատիկայի հիմնական բաժիններին, հավանականությունների  
տեսության և մաթեմատիկական վիճակագրության մեթոդներին, մաթեմատիկա-  
կան մոդելավորման եղանակներին,
- տիրապետի ինֆորմացիայի հավաքման, պահպանման և մշակման համկարգ-  
չային մեթոդներին և կարողանա օգտագործել ժամանակակից ինֆորմացիոն  
տեխնոլոգիաներ,

*գ/ մասնագիտական գործունեության բնագավառում՝*

- հողօգտագործման հիմնավորումը ըստ նպատակային նշանակության և սեփա-  
կանության ձևերը,
- հողօգտագործման, հողահատկացման, օտարման գործընթացի հիմնավորումը և  
արդյունավետ հողօգտագործման միջոցառումների մշակումը,
- գյուղատնտեսական հողատեսքերի հողաշինարարական կազմակերպման մե-  
թոդները և նրանց իրականացման ուղիները,
- հողակադաստրային աշխատանքների կազմակերպման և տեխնոլոգիաների  
մշակումը և ֆինանսական հիմնավորումը,
- արդյունավետ հողօգտագործման հողաշինարարական կազմակերպման տնտե-  
սական հիմնավորումը:

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի հատուկ պատրաստությանը  
որակավորման աստիճան

Վերաբերվող պահանջները սահմանում է մասնագիտացումն առաջադրող բուհը՝ ՀՀ ԿԳՆ մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները մշակող գիտամեթոդական հանձնաժողովի հետ համաձայնեցրած, որոնք ՀՀ ԿԳՆ-ում մասնագիտացումը հաստատելուց հետո միասնական են դառնում այլ բուհերի համար, բխում են մասնագիտացման կրթաբովանդակի բովանդակությունից և տվյալ մասնագիտացմամբ մասնագետներ պատվիրած կազմակերպության գործառնություններից:

Նշված փորձառությունները ներառում են՝

- հետազոտական աշխատանք վերելու, վերացական տրամաբանական մտածողության, ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդները կիրառելու և քննադատական վերլուծության ունակություններ,
- անձանոթ պայմաններում առաջացած ոչ կոնստրուկտիվ հիմնահարցերի բացահայտման, հաղթահարման և վերջնական լուծման, սեղմ ժամանակացույցով աշխատանքներ կազմակերպելու ընդունակություն,
- մասնագիտական գործունեության բնագավառում նորամուծությունների նկատմամբ ընկալունակության ցուցաբերում:

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի մարդկանց հետ աշխատելու  
որակավորման աստիճան

փորձառությունը ենթադրում է նրա ունակությունները՝

- այլ անձանց հետ փոխգործակցելու, կոլեկտիվում նրանց հետ հաղորդակցվելու,
- խնդիրներ ձևավորելու և դրանք ենթականերին պատվիրակելու,
- մարդկանց ստեղծագործական աճի ձգտումը խրախուսելու և զարգացումն ապահովելու,
- ծագած տարաձայնությունները և բախումները լուծելու,
- տարբեր զարգացման և մտավոր մակարդակի տեր մարդկանց հետ համագործակցելու,
- մասնագիտական հարցերի շրջանակներում ընդունելի որոշումների հասնելու նպատակով բանակցություններ վարելու,
- տարաբնույթ և տարասեռ մշակութային միջավայրերում աշխատելու և այլն:

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի՝ ինֆորմացիայի հետ աշխատելու  
որակավորման աստիճան

փորձառությունը պահանջում է պարտադիր հմտություններ՝

- պաշտոնական և ոչ պաշտոնական իրավիճակներում սեփական կարծիքը գրավոր և բանավոր ձևերով շարադրելու, քննարկելու և գործուն կարգով պաշտպանելու,
- լեզվային և մշակութային տարբերությունների հաշվառմամբ գրավոր ինֆորմացիան լսելու և վերլուծորեն ընկալելու, բանավոր տպագրված և էլեկտրոնային աղբյուրներից ստացված ինֆորմացիան որոնելու, ստանալու, համակարգելու, գրավոր ձևակերպելու և օգտագործելու:

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործման գծով

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրը պետք է ծանոթ լինի տվյալ-  
որակավորման աստիճան

ների մշակման երկուսից ոչ պակաս համակարգերի, համակարգչային և բազմաօգտագործման տեղային ցանցային համակարգերին, ինչպես նաև կարողանա կատարել ինֆորմացիայի որոնում տվյալների ցանցային բազաներում (www), օգտվել էլեկտրոնային փոստից, տվյալների բազաների փաթեթից:

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր պետք է հասկանա իր մասնագիտության  
որակավորման աստիճան



էությունը և սոցիալական նշանակությունը, իր որակավորման շարունակական բարձրացման անհրաժեշտությունը հետքուհական և լրացուցիչ կրթություն ստանալու կամ էլ նոր գիտելիքների ինքնուրույն տիրապետման միջոցով:

7.2. Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի եզրափակիչ պետական որակավորման պահանջները.  
որակավորման աստիճան

7.2.1. 310901 Հողաշինարարություն և հողային կադաստր մասնագիտությամբ  
դասիչ, անվանում

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի եզրափակիչ որակավորումը  
որակավորման աստիճան

ներառում է՝ ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքի պաշտպանությունը և պետական քննության հանձնումը, որոնք թույլ են տալիս բացահայտելու շրջանավարտի տեսական և գործնական պատրաստությունը սույն պետական կրթական չափորոշիչներով սահմանված մասնագիտական խնդիրների լուծման բնագավառում:

7.2.2. Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի ավարտական որակավորման  
որակավորման աստիճան

(դիպլոմային) աշխատանքին ներկայացվող պահանջները.

310901 Հողաշինարարություն և հողային կադաստր մասնագիտությամբ  
դասիչ, անվանում

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի ավարտական որակավորման  
որակավորման աստիճան

(դիպլոմային) աշխատանքն ավարտուն մի մշակում է, որը կատարված է մասնագիտության ուսումնական պլանին համապատասխան և նպատակ ունի ամրապնդել և ընդլայնել շրջանավարտի տեսական և գործնական գիտելիքները հողային ֆոնդի հաշվառման, արդյունավետ հողօգտագործման կազմակերպման, հողերի կադաստրային գնահատման, հողաշինարարական նախագծային միջոցառումների իրականացման, կուլտուր-տեխնիկական միջոցառումների կազմակերպման, գյուղ հողատեսքերի հողաշինարարական կազմակերպման, հողակադաստրային աշխատանքների կազմակերպման և տեխնոլոգիաների իրականացման, նախագծային միջոցառումների տնտեսական արդյունավետության հիմնավորման, կենսագործունեության անվտանգության և շրջակա միջավայրի պահպանման ոլորտներում:

Բովանդակային առումով ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքը պետք է՝

- ներկայացվի որպես բնագավառի հիմնահարցերից մեկին վերաբերող տեսական, վերլուծական, սոցիալ-տնտեսագիտական կամ փորձարարական հետազոտություն, որում շրջանավարտը բացահայտում է իր տեսական գիտելիքները և գործնական ունակությունները, որոնք թույլ են տալիս ինքնուրույն լուծելու մասնագիտական բնույթի խնդիրներ,
- ցույց տա շրջանավարտի կողմից գիտական և համակարգային վերլուծության մեթոդների յուրացման աստիճանը, ունակությունը կատարելու տեսական ընդհանրացումներ և գործնական եզրակացություններ, հիմնավորված առաջարկություններ և երաշխավորություններ բնագավառի հիմնահարցերի լուծման կատարելագործման վերաբերյալ,
- կրի ստեղծագործական բնույթ հավաստի վիճակագրական տվյալների օգտագործմամբ,
- բացահայտի շրջանավարտի պատրաստության աստիճանը ինքնուրույն աշխատելու տարածքի հողաշինարարական կազմակերպման, նախագծման, հողակա-

դաստրային և հողաշինարարական աշխատանքների կազմակերպման և տեխնոլոգիայի գիտահետազոտական, արտադրական և ուսումնական ոլորտներում:

- համապատասխանի նյութի տրամաբանված և հստակ շարադրման պահանջներին և հենվի հավաստի փաստերի վրա,
- արտացոլի շրջանավարտի ունակությունը օգտագործելու տեղատվության որոնման, ընտրության, համակարգման և մշակման արդի մեթոդները, աշխատել բնագավառի նորմատիվ-իրավական ակտերի հետ,
- ձևավորված լինի հրատարակչական արդի նորմատիվներին և պահանջներին համապատասխան, ունենա հետազոտական աշխատանքի հաշվետվությանը բնորոշ կառուցվածք և 60-70 էջ համակարգչային շարվածքի ծավալ:

Ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքների թեմատիկան սահմանում է մասնագիտացնող ամբիոնը: Թեմատիկայում պարտադիր կարգով պետք է ներառվեն հողային ֆոնդի հաշվառման, արդյունավետ հողօգտագործման կազմակերպման, հողերի կադաստրային գնահատման, հողաշինարարական նախագծային միջոցառումների իրականացման, կուլտուր-տեխնիկական միջոցառումների կազմակերպման, գյուղ հողատեսքերի հողաշինարարական կազմակերպման, հողակադաստրային աշխատանքների կազմակերպման և տեխնոլոգիաների իրականացման, նախագծային միջոցառումների տնտեսական արդյունավետության հիմնավորման, կենսագործունեության անվտանգության և շրջակա միջավայրի պահպանման առաջնահերթ և հրատապ հարցերը, հաշվի առնելով բուհի (ֆակուլտետի) ընտրած մասնագիտացումները և ընտրովի դասընթացների բովանդակությունը ըստ կրթաբլոկների:

Ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքի կառուցվածքներում պետք է ներառվեն հետևյալ բաժինները՝

1. հողերի կադաստրային գնահատումը,
2. հողաշինարարական նախագծում,
3. հողաշինարարական և հողակադաստրային աշխատանքների կազմակերպում և տեխնոլոգիա,
4. հողակադաստրային աշխատանքների կազմ. տնտ. արդյունավետություն,
5. կենսագործունեության անվտանգություն և շրջակա միջավայրի էկոլոգիական հավասարակշռությունը:

### 7.2.3 Պետական քննությանը ներկայացվող պահանջները

Եզրափակիչ որակավորման (պետական) քննության բովանդակությունը, անցկացման ձևը և ուսանողների գիտելիքների գնահատման չափանիշները սահմանում է բուհը (ֆակուլտետը) և հաստատում բուհի գիտական հորիզոնը: Նրանում պարտադիր կարգով ներառվում են հարցեր մասնագիտության հետևյալ հիմնական ուսումնական դասընթացներից՝

1. գեոդեզիա,
2. հողաշինարարության տեսական հիմունքներ,
3. հողային կադաստր,
4. հողաշինարարական նախագծում,
5. հողային ռեսուրսների օգտագործման կանխատեսում,
6. հողակադաստրային գեոդեզիական աշխատանքներ,
7. մելիորացիայի հիմունքներ:

ԿԱԶՄՈՂՆԵՐ՝

ՀՀ կրթության և գիտության նախարարությանն առընթեր

**310901 - Հողաշինարարություն և հողային կադաստր** մասնագիտության պետական կրթական չափորոշիչները մշակող գիտամեթոդական հանձնաժողովի աշխատանքային խումբը

ՀՀ և ՀԿ ֆակուլտետի ղեկան, պրոֆ. <small>պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը</small>		Ս. Ս. Ղազարյան <small>անուն, ազգանուն</small>
ՀՀ և ՀԿ ֆակուլտետի ղեկանի տեղակալ <small>պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը</small>		Հ. Կ. Պողոսյան <small>անուն, ազգանուն</small>
ՀՏԿ և մեխորագիայի ամբիոնի պրոֆ. <small>պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը</small>		Գ. Ս. Եղիազարյան <small>անուն, ազգանուն</small>
Հողաշին. և հողային կադաստրի ամբ. վարիչ, դոց. <small>պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը</small>		Պ. Ս. Էֆենդյան <small>անուն, ազգանուն</small>
Կենսագործ. անվտանգության ամբ. վարիչ, դոց. <small>պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը</small>		Հ. Թ. Հակոբյան <small>անուն, ազգանուն</small>
Կենսագործ. անվտանգության ամբիոնի պրոֆ. <small>պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը</small>		Հ. Ս. Սարգսյան <small>անուն, ազգանուն</small>
Նյութերի ղիմադրության և ԵԿ ամբ. վարիչ, պրոֆ. <small>պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը</small>		Ռ. Ս Սինասյան <small>անուն, ազգանուն</small>
Հայոց պատմության և փիլիսոփ. ամբ. վարիչ, դոց. <small>պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը</small>		Բ. Ա. Խաչատրյան <small>անուն, ազգանուն</small>

**310901 - Հողաշինարարություն և հողային կադաստր**

դասիչ մասնագիտության անվանումը

մասնագիտության պետական կրթական չափորոշիչը քննարկվել և հաստատվել է

պետական կրթական չափորոշիչները մշակող  
մասնագիտության ուղղությունը

գիտամեթոդական հանձնաժողովի 2008թ հունիսի 4-ի նիստում(արձանագրություն թ.14):

Հանձնաժողովի նախագահ՝

ՀՊԱՀ ռեկտոր, պրոֆեսոր  
պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը

Ա. Պ. Թարվերդյան  
անուն, ազգանուն

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 200\_\_ թ

Համաձայնեցված է.

ՀՀ ԿԳՆ բարձրագույն և հետբուհական

մասնագիտական կրթության վարչության պետ՝

գիտ.աստիճանը կոչումը

անուն, ազգանուն

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 200\_\_ թ.